№ 270 ՇԱԲԱԹ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9

1906

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9 № 270

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի. առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊԷԿՈՎ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». Базарная ул. д. Тамамшева № 16. կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզւով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՄՇԱԿ"

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ԱՌԱՋԻԿԱՅ 1907 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(35-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 րուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դօլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Կիրակի, դեկտեմբերի 10-ին, Կուկիայի Նորաշէնի ս. Աստուածածնի եկեղեցում, ս. պատարագից յետոյ, կը կատարվի հոգեհանգիստ ի յիշատակ վաղամեռիկ՝

ԲԱԳՐԱՏ ՄԻՐԶՕՅԵԱՆ ՅԱԿՈԲԵԱՆՑԻ,

որը վախճանվել է ներկայ տարվայ նոյեմբերի 28-ին Վարշավայի նահանգի Օլգիւշ գիւղում զինւորագրութեան պաշտօնը կատարելիս։ Ցաւօք սրտի յայտնելով այդ մասին նրա հօրեղբայր և խնամակալ Միքայէլ Յակոբեանցը՝ խոնարհաբար խնդրում է իր բարեկամներին և ծանօթներին՝ պատւել հանգուցեալի յիշատակը իրանց ներկայութեամբ։ Սկիզբն է հոգեհանգստի 10½ ժամին առաւօտեան։ 1—1

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ!!

Շուտով կը հրատարակվեն ընտրողների ցուցակները Պետական Դումայի համար։ Ամեն մի անձն, ով ընտրութեան իրաւունք և ցենզ ունի, պէտք է հետամուտ լինէ իմանալու համար, արդեօք մտցրված է իր անունը ցուցակների մէջ և եթէ չէ մտցրած, աշխատէ ուղղել տալ սխալը և մտցնել տալ իր անունը, որ չը զրկվի ձայն տալու իրաւունքից պատուիրակների ընտրութեան ժամանակ։ Ցուցակների հրատարակութեան օրից 2 շաբաթ ժամանակամիջոց է տրվում յայտարարութիւն տալու համար, որ սխալն ուղղեն։ ա. օ. մ. 3—10

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

1907 Թ.

ԵՐԿՐԻ ՁԱՅՆԸ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ,

որ նուիրուելու է մասնաւորապէս Թիւրքահայկական հարցի լուսաբանութեանը. ծանօթացնելու է իր ընթերցողներին հայ և Թիւրք կեանքի քաղաքական, հասարակական, գրական ու գեղարուեստական զանազան երեւոյթների հետ. պէտք է ձգտի հայ-Թիւրքական համերաշխ գործակցութեան

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

	Տարեկան	Վեց ամսուան
Թիֆլիս	3 ր. 50 կ.	2 ր. —
Գաւառ	4 ր. —	2 ր. 25 կ.
Ամերիկա	2,50 դոլ.	1,50 դոլ.
Արտասահման	13 ֆր.	7 ֆր.

Խմբագրութեան հասցէն՝—Тифлисъ, редакція «Еркри Дзайнъ», Грибоѣдовская, № 16, д. Зубалова, կամ Tiflis, rédaction de l'«Erkri Dzaïn», Griboedovskaya, № 16, maison Zoubaloff.

Թիֆլիսում կարելի է բաժանորդագրուել և «Գուտտենբերգ» գրավաճառանոցում։

Կիրակի, դեկտեմբերի 10-ին, առաւօտեան ժամը 11 ին, նշանակված է արտիստական շինութեան մէջ

Հայոց Դրամատիկական Ընկերութեան

Ընդհանուր արտակարգ ժողով

Զբաղմունքների առարկաները.

1) Հանգուցեալ դերասան Պետրոսեանի ընտանիքն ապահովելու խնդիր.
2) Դրամատիկական ակումբի մասին զեկուցում.
3) Հայկական Թատրոնի պատմութիւն կազմելու խնդիր.
4) Դերասան Թուրեանին մահարձան կանգնելու խնդիր.
5) Հաւլաբարի Թատրոնում ներկայացումները շարունակելու կամ վերջացնելու խնդիր.
6) Դրամատիկական ընկերութեան ֆինանսական դրութեան հարց.

(2. 7. 10.) առ. 3—3

ԲԱՑՎԱԾ Է ՆԱԵՒ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1907 Թ.

ԽԱԹԱԲԱԼԱ

Երգիծաբանական-սատիրական պատկերազարդ շաբաթաթերթի

Տարեկան գինն է՝	Թիֆլիսում 4 ր.	Ուրիշ տեղեր՝	5 ր.։
Կէս տարվայ	» » 2 ր.	» »	2 ր. 50 կ.
3 ամսվայ	» » » 1 ր.	» »	1 ր. 25 կ.
1 ամսվայ	» » » — 40 կ.	» »	— 50 կ.

«ԽԱԹԱԲԱԼԱ»-ի տարեկան բաժանորդները 1907 Թ-ին, բացի 50 № Թերթից ՁՐԻ ստանալու են. 1) գունաւոր ՏԱԽՏԱԿ—ՕՐԱՑՈՅՑ, 2) միջագիր խիստ շքեղ պատկեր՝ զանազան գոյներով տպված, 11×8 վերշօկ մեծութեամբ, որ ծառայելու է որպէս պատից կախելու ԶԱՐԴ—ՊԱՏԿԵՐ և 3) մի «ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ», մօտ 200 միջագիր երեսներից բաղկացած, ուր մտնելու են եւրոպական և ռուսական նոր երգիծաբանական գրողների լաւագոյն գրուածքներից նմուշներ։

Ընդունում ենք ամեն լեզուներով յայտարարութիւններ։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція «Хатабала».

Խմբագիր-հրատարակող՝ Աստ. Երիցեան

(ու. կ. ե.) առ. 7—20

Արտիստիկ Ընկերութեան Թատրոն

Երկուշաբթի, դեկտեմբերի 11-ին

ՀԱՅ ԴՐԱՄԱՏԻԿ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՒՄԲԸ

մասնակցութեամբ Յ. ՍԻՐԱՆՈՅՇԻ

Յ. ԱԲԵԼԵԱՆԻ բենեֆիսին

կը ներկայացնէ

ՀԱՅՐԵՆԻՔ

Դրամա 7 պատկերով ՍԱՐԴՈՒԻ, Թարգմանութիւն Նելեանի։

Սկիզբը երեկոյեան ժամը ճիշտ 8-ին։

Տեղերի գները բենեֆիսի են։

Վարչութեան հերթապահ անդամ. Ռ. Յովհաննեսեան

Ռեժիսօր Յ. Աբելեան

առ. 1—1

ՀԱՒԼԱԲԱՐԻ ԹԱՏՐՈՆ

կիրակի, դեկտեմբերի 10-ին

ՀԱՅ ԴՐԱՄԱՏԻԿ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՒՄԲԸ

կը ներկայացնէ

ԽԱՆՈՒՄ

կօմ. 3 ար., Ցագարելու, Թարգ. Արաքսեանի

ՎԵՐՋԸ

ԳՈՂ

Պիես 1 ար., Միրբօյի, Թարգմ. Վ. Փափազեանի

Սկիզբը երեկոյեան ժամը ճիշտ 8-ին է,

Վարչութեան հերթապահ անդամ՝ Մ. Մուրադեան

Ռեժիսոր՝ Յ. Աբելեան

առ. 1—1

Էջմիածնի դէպքերի առիթով խորհրդակցութեան շարունակութիւնը, որ կայանալու էր այսօր, ուրբաթ, կայանալու է կիրակի, դեկտեմբերի 10-ին, երեկոյեան ժամը 7-ին, Վրաց ազնուականութեան տան մէջ, դահլ. № 53, որին հրաւիրվում են մասնակցելու Թէ առաջին խորհրդակցութեան ժամանակ հրաւիրված բոլոր հաստատութիւնների և խմբագրութիւնների ներկայացուցիչները և Թէ Թիֆլիսի բոլոր հայ եկեղեցիների երէցփոխները, որոնց պէտք է ներկայ յայտարարութիւնը ընդունեն իբրև հրաւէր։

2—2 առ. (ու.կ.) Բ. Վէրմիշեան

ԲԺԻՇԿ

Տ. Ա. Խասխաճեան

ՄԱՍՆԱԳԷՏ

Ներքին եւ վեներական հիւանդութիւնների

Ընդունելութիւն { առաւօտ. 10—12 ժ. երեկոյեան 5—7 ժ.

Սօլոլակ, Սերգիեւսկայա 15, Փրիդօնովի տանը։

առ. (չ.ու.գ.) 18—100

ՄԱՍՆԱԳԷՏ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԲԺԻՇԿՆԵՐԻ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ՆԵՐԹԵՒԵԿ ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մեծ-Վանքի փողոց, № 5, ոչ հեռու Ալեքսանդրեան այգուց.

Վճարն է խորհրդի համար 50 կոպ.

Հեռախօս № 481.

Ընդունելութիւնը առ. ժ. 11—5 ժ. եր.

Բժ. Տ. Ի. ԲՈՒԴԷՆԿՕ.—Ներքին հիւ. հինգշ., կիր. 3—4 ժամ.
Բժ. Ֆ. Վ. ԶՈՒԻԴՆՈՎՍԿԻ.—Վիրաբուժ. հի. երկ., ուրբ. 2—3 ժ.
Բժ. Մ. Ի. ԽԱՆԶԷՎՍԿԻ.—Ականջի, քթի և բկի, չորեքշ., ուրբ., կիր. 2—3 ժ.
Բժ. Վ. Վ. ՎՆՈՒԿՕՎ.—Վիրաբուժ., միզասեռ. երկ., հինգ., շաբ. և կիր. 2—3 ժ.
Բժ. Ն. Մ. ԱՍՊԻՍՕՎ.—Քթի, բկի և ականջի, երկ., երեք. և շաբ. 1-2 ժ., հինգ., կիր., 12—1 ժ.
Բժ. Վ. Գ. ԲՕԺՕՎՍԿԻ.—Ներքին հիւանդով ամենայն օր 4—5 ժ.
Բժ. Ա. Ն. ՏԵՏՐԱԶԷ.—Կաշուի, վեներ. ամենայն օր 1—2 ժ.
Բժ. Վ. Ի. ԻՆԱԵՎ.—Ներքին, 1—2 ժ. երեքշ., չորեքշ., շաբ., կիրակի, կանանց երկուշաբթի, հինգշ., 1—2 ժ., ուրբ. 12—1 ժ.։
Բժ. Ա. Ա. ՄՕՆՍԷ.—Ներքին, երեկ. երեք., հինգ., շաբ. 4—5 ժ.
Բժ. Ա. Տ. ՌՕԶՄԱՐԻԿՍԿԻ.—Երեկ., չորեք., շաբ 11—12 ժ. երկ., ուրբ. 1—2 ժ.
Բժ. Ն. Ի. ՆԵՌՈՒՍՄԻՆ.—Աչքի, երկ., երեք., չոր., ուրբ., շաբ., 11—12 ժ.
Բժ. Ա. Ա. ՆՕՎԻՑԿԻ.—Կանանց, երեկ., չոր., կիր. 12—1 ժ., երեք., ուրբ. 1—2 ժ.
Բժ. Զ. Ֆ. ՆԵՎԶՕՐՕՎ.—Ատամի հիւ. 11—1 ժ. ամենայն օր.
Բժ. Կ. Մ. ՊԻՎԱՐՍԿԻ } կլինիքական անալիզ
Բժ. Կ. Ի ԶՈՒԻԴՆՈՎՍԿԻ }
Բժ. Գ. Իւ. ՕՆՕՇԿՕ.—Բժշկ. գիմն. մասսաժ, ելեքտր. 4—6 ժամ.
Մ. Ե. ԳՕՐՕԳՑՕՎԱ.—Մասաժ. 11—4. ժ.
Ս. ԵԱ. ՊԱԻԼՕՑԿԻ.—Վիրար. 12—1 ժ. ամենայն օր, կիրակի օրը 4—5 ժ.
Վ. Ի. ԻՆԱԵՎ.—Ներքին, 11—1 ժ. երկ., երեք., չորեք., ուրբ., կանանց 1—2 ժ. հինգ., շաբաթ., կիրակի։

Բժշկական խորհուրդներ, մասսաժ, սրսկել, անդամահատել, անալիզի ենթարկել, հիպնոզել, ատամների և ծամերի քննելը—ըստ համաձայնութեան։

առ. (ա. օ.) 20—144

Թիֆլիսի Արտիստիկական Ընկերութեան դահլիճում

դեկտեմբերի 10-ին կը կայանայ

ՀԱՄԵՐԳ

Յօգուտ Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան

Կը մասնակցեն՝ տ.տ. Մ. Ի. Սվէտաղէ, Զորդանեան, Սիրանոյշ, Ն. Սապարօվա-Շերսեվա, և պ.պ. Գ. Գ. Բիլգշտէյն, Դեկապրեւվիչի Զ. Ս. Կոզան, Ս. Ե. Քափանակեան, Վ. Լ. Ուշուրաձէ և Բ. Գ. Շերսեվ։

Վիճակախաղ կը տրվեն մի քանի Թանգագին իրեր

Համերգից յետոյ կը լինեն պարեր

Սկիզբն է երեկոյեան 8½ ժամին

Մուտքի տոմսակն արժէ 2 ր. 20 կոպէկ

Ուսանողները վճարում են 50 կոպէկ

Տոմսակները նախօրօք կարելի է ստանալ ընկերութեան արհեստանոցում մինչև ցերեկվայ ժամը 3-ը. Գանօվսկայա № 19-ը։ 2—3

ՀԱՒԼԱԲԱՐԻ ԹԱՏՐՈՆ

Շաբաթ, դեկտեմբերի 9-ին

Հ. Սանթուրճեանը

Մի խումբ երիտասարդների խնդիրքով

կը ներկայացնէ

I

Բաղդասար Աղբար

կօմ. 3 գործ. հեղ. Պարոնեանի

II

ՍՕՆԱՅԻ ՆՇԱՆԴՐԷՔԸ

ՊԱՐԵՐՈՎ

վօդ. 1 գործ. հեղ. Եսայեանի

Բարեհաճ մասնակցութեամբ դերասանների և Հաւլաբարի Թատերասիրաց նորակազմ խմբի

Սկիզբն է երեկոյեան ժամը 8-ին

Տեղերի գները 2 ր. 10 կ., մինչև 20 կոպ.։

Տոմսակները կարելի է գնել նաև «Անատոլիա» ճաշարանում, Վելեամինեան փողոց։

(հ. ու. գ.) 2—3

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

„ՍԱՓՐԻՉ"

հումոր, սատիրիկ-սիմվոլիք

ամսաԹերԹի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Լոյս տեսաւ

V-րդ համարը,

որը և ուղարկվեց բաժանորդներին նաև

„ԱՆԻ"

հրատարակչ. ընկեր. բաց նամակների I սերիան, 8 հատ, գինն է 60 կոպ.։

Բաժանորդներին ուղարկվեց ձրի իբրև «Սափրիչ» 1 պրէմիան։

Տարեկան բաժանորդագինն է պրէմիայով 2 րուբլի, իսկ Անդրկասպեան երկրի և արտասահմանի համար 2 րուբլի 50 կոպ.։

Հասցէ՝ С. П. Б. Казанская 46, 18.

«ՍԱՓՐԻՉ»-ի խմբագրութիւն

ե. գ. առ. 16—25

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կուլտուրական մասսաներ. Վերջին տեղեկութիւններ. Շուշու իրականութիւնից. Խլըրտումներ Շուշու Թեմական դպրոցում. Մի յիշողութիւն. Դպրոցներում. Ֆինլանդական սէնատի նոր նախագիծը. Կուսակցութիւնների և դաշնակցութիւնների շուրջը. Երկու նոր օրէնքներ. Դարձեալ Դուրկոյի գործի մասին. Թատրոն և երաժշտութիւն. Սիւլէյման-խան Շէքինսկիյ։ Մխիթարգործութիւնների տարեգրութիւնից. Դէպի աշխատանք. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ—Նամակ Գերմանիայից. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՄԱՍՍԱՆԵՐ

I

Առանձին անհատներ մեր մէջ կարող են աչքի ընկնող դիրք ստանալ գիտութեան, գեղարուեստի և հասարակական գործունէութեան ասպարէզում։ Բայց նրանք ճոխ ու լայն կերպով չեն կարող բեղմնաւորել կեանքը, մինչև մասսաները պատրաստ չը լինեն նրանց գնահատելու, ընդունելու և աջակցելու։

Մի մատենագիր, մի վիպասան, մի նկարիչ, մի երաժշտագէտ, մի գիտնական գործող ինչպէ՞ս կարող է ընդարձակել իր գործունէութիւնը, երբ նրա արդիւնաբերած աշխատութիւնները չեն գնահատվում հասարակութեան կողմից, չեն սպառվում, չեն խրախուսվում։

Եթէ խոշոր տաղանդները և տոկուն բնաւորութիւնները կարողանում են մի կերպ դիմանալ կեանքի փորձութիւններին և չընկճվել, աւելի յաճախ մենք տեսնում ենք, որ շատ մարդիկ յոգնում են, լքվում և վհատվում, մատնելով իրանց անգործութեան։

II

Երեկվայ մեր յօդուածում մենք շեշտեցինք, որ անհրաժեշտ է եռանդուն գործունէութիւն՝ տարածելու գրագիտութիւն ժողովրդական մասսաների մէջ։

Այո, անհրաժեշտ է։

Միևնոյն ժամանակ պէտք է ձգտել, որ ժողովուրդը ինքը գիտակցօրէն տէր դառնայ իր բոլոր գործերին և դառնայ իր առաջադիմութեան կարգադրողը։ Իսկ երբ նա իր հաւաքական ոյժով հանդէս կը գայ և կը սկսէ գործել, այն ժամանակ կուլտուրական գործունէութիւնը կը դառնայ մի զօրաւոր և հոյակապ գործօն ժողովրդական կեանքի մէջ։

Գործունէութիւն մասսաների համար և մասսաների միջոցով—դա ժամանակակից մեր հոգատարութեան խնդիրներից մէկն է, որը պէտք է առաջ մղել աջակից ոյժերով։

Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ են համապատասխան կազմակերպութիւններ մեր երկրի զանազան մասերում։

III

Այնտեղ, ուր մասսաները ուժեղ են իրանց կուլտուրականութեամբ, գիտեն մտցնել կատարելագործութիւններ իրանց արդիւնագործութիւնների մէջ և սովորել են համերաշխ ու հաւաքական գործունէութեան, նրանք դառնում են անընկճելի զանազան փորձութիւնների հանդէպ և դիմանում են այն մրցութիւններին, որ հանդէս են գալիս ամեն կողմից։

Ստեղծել գիտակցական կուլտուրական մասսաներ—ահա մեր սերնդի պարտաւորութիւններից մէկը։

Մեր երիտասարդ ոյժերը մեր հասարակական հին ու նոր գործողները պէտք է մի շարք միջոցներով առաջ տանեն մասսաներին ներգործական տարր և հասարակական ոյժ դարձնելու առաքելութիւնը։

Տարածել գրագիտութիւն մասսաների մէջ, կազմակերպել նրանց՝ մի շարք հաւաքական գործերի համար—ահա այն հերթական գործը, որ դրված է մեր գործողների առաջ։

Ժողովուրդը սպասում է իր գործողներին։

IV

Տուէք ժողովրդին տարրական կրթութիւն։

Տուէք ժողովրդին մատչելի գրքեր, որոնք տային նրան տեղեկութիւններ իր երկրի մասին և մատակարարէին օգտաւէտ տեղեկութիւններ նրա կեանքի բարելաւման մասին։

Տուէք նրան մատչելի և կրթիչ ներկայացումներ, որոնք տպաւորիչ տեսարաններով ներկայացնէին կեանքի երևոյթները և գաղափարների կռիւը կեանքի մէջ։

Տուէք նրան դասախօսութիւններ, ցուցահանդէսներ և շրջիկ արդիւնագործութիւններ։

Տուէք նրան զանազան ընկերակցութիւններ և հիմնարկութիւններ։

Կազմակերպեցէք նրան համայնական և հաւաքական գործունէութեան համար։

Այն ժամանակ ժողովուրդը ոտքի կը կանգնէ և կը գործէ։

Բայց որպէսզի այդ լինի, պէտք է շատ ու շատ աշխատել։

Ընդունակ էք արդեօք այդպէս աշխատելու։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Դեկտեմբերի 8-ին, ցերեկվայ ժամի 1-ին, Վորոնցովի արձանի մօտ տարճանակի գնդակի երկու հարուածով ծանր կերպով վիրաւորված է Էջմիածնի գաւառապետ փոխ-գնդապետ Ենկել։ Գնդակներից մէկը կպել է կրծքից ու անցել։ Վիրաւորին փոխադրել են Միքայէլեան հիւանդանոցը։

—

Նօբէլի ներկայ տարվայ մրցանակաբաշխութիւնը կատարվել է և խաղաղութեան համար յատկացված մրցանակը տրվել է Միացեալ Նահանգների նախագահ՝ Թէօդոր Ռուզվելտին, իբրև խաղաղութեան դատի մեծ ծառայութիւն մատուցանողի։

Մրցանակը տրվել է գլխաւորապէս նկատի առնելով նրա միջնորդութիւնը, դէպի ռուս-ճապոնական հաշտութեան կնքման գործում։

Ռուզվէլտը, Միացեալ-Նահանգների արտաքին գործերի մինիստրին յայտնել է, որ ընդունէ մրցանակը իր անունով։ Եւ ստանալով մրցանակը, Ռուզվելտ նրա գումարով հաստատում է մի նոր մրցանակ, մի նոր հիմնարկութիւն՝ այն է մի խաղաղարար, հաշտարար ատեան բանւորների և գործատէրերի միջև։

Ռուզվէլտ Թղթակիցներին յայտնել է, որ իր համար մեծ պատիւ է համարում Նօբէլի մրցանակի ստանալը։

—

Նոր-Նախիջևանի դէպքը

Նոր-Նախիջևանի հայոց Թեմական դպրոցի դէպքը, այն է մի աշակերտի (Պօղոսեանի) մանկավարժական և հոգաբարձական մարմինների որոշմամբ արձակման և վերջին 3 դասարանների փակման դէպքը արդէն յայտնի է հայ հասարակութեան։ Սկզբում աշակերտները դիմեցին մեզ և խնդրեցին Թոյլ տալ իրանց պաշտպանել իրանց իրաւունքները։ Մենք ուրախութեամբ ընդունեցինք, չը փակելով, ի հարկէ, ինչպէս պահանջում էր արդարութիւնը, մեր դռները դպրոցի վարչութեան և նրա կողմնակիցների առաջ, վարչութեան, որ դիմել էր այդպիսի մի խիստ միջոցի։ Այդ դէպքը մինն էր այն դէպքերից, որոնց վերաբերմամբ հասարակութիւնը չը պէտք է լռէր և հասարակական դատաստանը անհրաժեշտ էր, ինչպէս Էջմիածնի դէպքի մասին անհրաժեշտ նկատվեց հասարակական քննութիւնը։ Այդ մասին էլ զանազան կողմերից պահանջներ եղան, որոնք այն միտքն էին արծարծում, Թէ քանի որ դպրոցը հասարակական հիմնարկութիւն է, նրա խնդիրը պէտք է հասարակութիւնը ինքն որոշէ։

Ի պատիւ Նոր-Նախիջևանի հայ հասարակութեան, պէտք է ասել, որ նա անտարբեր չը մնաց։ Ահա ինչ ենք կարդում Նոր-Նախիջևանի «Նոր Կեանք» շաբաթաթերթի վերջին (№ 23) համարում, որ այս բոպէիս ստացանք։

«Անցեալ կիրակի, նոյեմբերի 27-ին գումարվեց Նոր-Նախիջևանի 60 պատգամաւորների ընդհանուր ժողովը, Թեմական դպրոցի վերջին դէպքերը քննելու և իր եզրակացութը վճիռը կայացնելու համար։ Ժողովը գումարուեց, բայց եզրակացութեան ձայնը հաստատեց այն, ինչ որ մանկավարժական ու հոգաբարձական մարմիններն էին որոշել, այսինքն հինգերորդ դասարանի աշակերտ Պօղոսեանին համարել արտաքսուած, իսկ վերջին երեք դասարանների աշակերտներին արձակուած։

Մենք կարծում էինք, որ պատգամաւորական ժողովը լինելով չէզօք մարմին, կաշխատէր մի կերպ բարդութիւնների առաջն առնելու և միջին ճանապարհ ընտրելով վերջ կը դնէր այդ խառնաշփոթ դրութեան։

Բայց, դժբախտաբար, մեր սպասածին հակառակ հաստատուեց մի վճիռ, որը, եթէ չասենք անարդար, գոնէ խիստ ենք համարում։ Արձակուած աշակերտները ընդունելու են խնդիրներով, ուրեմն նրանք այսպէս Թէ այնպէս ստիպուած, պէտք է հաշտուեն այդ որոշման հետ, և յանուն կարգապահութեան ու դպրոցի ընդհանուր շահերի շարունակեն իրանց պարապմունքները։

Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ այդ վճիռը կայացրուած է մի մասի կողմից, որը գոնէ մասամբ մեր հասարակութիւնն է ներկայացնում, պէտք է ճանաչել այդ որոշումը»։

Մենք չունենք առայժմ պատգամաւորական ժողովի պատճառաբանված վճիռը, ուստի և չենք կարող ասել, որքան արդար է նա, բայց յամենայն դէպս մենք ունենք հասարակական վճիռ, որը ունի կշիռ և նշանակութիւն։

ՇՈՒՇՈՒ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

(Դեկտեմբերի 4-ին)

XVIII

Աշխատանք չը կայ, գործ չը կայ, փող չը կայ,—ահա խօսքեր, որ յաճախ մարդ լսում է շուշեցու մռմնջացող բերանից և վշտոտ սրտից։ Ընթերցողին յայտնի վերջին երկու տարվայ դէպքերը Ղարաբաղը աղքատութեան գիրկը նետեցին, և շատերը զրկվեցին իրանց ապրուստի միակ միջոցից, իրանց գոյութիւնը պահպանելու հնարաւորութիւնից։ Աղքատ է և՛ անհատը, և՛ հասարակութիւնը, և կրթական ու հասարակական մի շարք հիմնարկութիւններ Շուշում։ Խօսենք փաստերով։

Շուշու Թեմական դպրոցը իր երկարամեայ գոյութեան ընթացքում ոչ մի տարի այնպիսի խոշոր բիւջէ չէ ունեցել, որպիսին այս տարի։ Դպրոցի ծախսերը սովորաբար 16—17 000 րուբլի են եղել, իսկ եկամուտներ համարեա Թէ նոյնքան։ Ասել է Թէ՝ մուտքը ծածկել է ծախսերը։ Այս տարի դպրոցի ծախսերը հասցված են մինչև 20,000 րուբլու, մի խոշոր գումարի, որի դիմաց դպրոցի հոգաբարձութեան դրամարկղում նրա կէսի չափն անգամ չը կայ։ Դպրոցի դրամարկղը դատարկ է, նրա մէջ մկներ են խաղում։ Այդ հանգամանքը հոգաբարձութեանը շատ նեղ կացութեան մէջ է դրել, որը միջոցների մասին երկար ու բարակ մտածելուց յետոյ դիմել է նրա ելքի բանալին։ Վճռված է մի պատգամաւորութիւն, բաղկացած Թեմակից առաջնորդ Աշոտ եպիսկոպոսից, ինժեներ Աստուածատուր Ջանումեանից և Դաւիթ Շահնազարեանից, ուղարկել հայաբնակ հարուստ քաղաքներ, գլխաւորապէս Թիֆլիս, Բագու, Մոսկվա և Պետերբուրգ, և նիւթական նպաստ խնդրել դպրոցի օգտին։ Պատգամաւորութիւնը շատ մեծ ակնկալութիւններ ունի վերջին երկու քաղաքներից, հայկական գաղութներից, նախանաւանդ Պե-

տեսչութիւնը պ. Լազարեանին: Մինչ, բաւական ծանօթ լինելով մայրաքաղաքների հայ հասարակութեանց հետ, բացարձակապէս կարող ենք ասել, որ, այնտեղերի հայերը խոշոր հարստութիւնների տէր լինելով, պատրիարքութիւնն անշուշտ յաջողութիւն ունենալու է: Սակայն մեզ այնքան չէ հետաքրքրում այդ, այլ խնդրի էական կողմը, որ դպրոցի ապահովութեան հարցի մէջ է կայանում:

Ասենք թէ պատրիարքութեան հաւաքած նպաստներով հոգաբարձութիւնը կարողացաւ դպրոցի գոյութիւնն այս տարի էլ պահել. Սակայն մինչև երբ. հասարակութիւնը դպրոցին ամեն տարի նպաստներ տալու չէ. այդ պարզ պէտք է լինի ամենքի համար: Ուրեմն որոնք են այն հիմնական և արմատական միջոցները, որ կարողանային դպրոցը ընդ միշտ ապահովել: Այդ, մեր համեստ կարծիքով, նրա կալուածները և կալուածները բարեխիղճ կերպով շահագործելն է: Դպրոցի ընդարձակ կալուածները, որոնք մի ժամանակ իրանց եկամուտներով պահպանում էին դպրոցը, պէտք է այսուհետև էլ աւելի լաւ շահագործել, այն քան թէ ներկայումս է այդ: Դպրոցի յարատևութիւնը, բացի կանոնաւոր հոգաբարձութիւն և պատրաստուած ուսուցչական լաւ խումբ ունենալուց, կախուած է նաև նիւթական մշտական միջոցներից:

Դպրոցը պէտք է իր մշտական սեփական միջոցներն ունենայ, այլապէս մուրալով և նպաստներ խնդրելով չի կարելի կրթական-հասարակական հիմնարկութիւն պահպանել: Այդ պէտք է ի նկատի ունենան դպրոցի հոգաբարձութիւնն ու նրա վարիչները, եթէ վերջիններիս շահը նրանց համար թանկ և գնահատելի է ամեն ինչից:

Այդ նոյն պատրիարքութիւնը նպաստներ պէտք է խնդրէ նաև Մարիամեան օրիորդաց դպրոցի օգտին, որը նոյնպէս ֆինանսական կրիզիսի մէջ է գտնվում...

XVIII

Վերջին երկու տարվայ ընթացքում հայ-թուրքական ընդհարումների ժամանակ, ինչպէս ընթերցողին յայտնի է, Շուշում այրվել է 561 տուն, որի մեծ մասը հայերին է պատկանում: Քաղաքի ամենալաւ և առաջնակարգ մասը ոչնչացված է և քաղաքը դատարկված: Շուշու աշխատաւոր հայ և թուրք մասսան համոզուած է, որ հայ-թուրքական ընդհարումներ այլ ևս չեն լինելու, ուստի նրա մէջ միտք է ծագել այրված տները վերաշինել, վերակենդանացնել Շուշին: Գեղեցիկ և ցանկալի միտք. սակայն մի հարց, որ ընթերցողը ակամայից տալիս է իրան, այդ այն է, թէ ինչ միջոցներով և ում փողերով վերաշինել Շուշու այրված տները:

Քաղաքային ինքնավարութիւնը իր մի շարք նիստերում քննել է քաղաքացիների համար այնքան կարևոր և անհրաժեշտ խնդիրը և վճռել փոխառութիւն անել: Այդ նպատակով քաղաքային վարչութիւնը սկզբում դիմել էր Մոսկվա՝ եղբ. Ժամհարեաններին և 300 հազար րուբլու փոխառութիւն խնդրել, բայց նիւթական սուղ միջոցների պատճառով, ինչպէս պատճառաբանել են Ժամհարեանները, մերժվել է քաղաքային վարչութեան խնդիրը. ապա վերջինս դիմել է մասնաւոր բանկերին նոյն նպատակով, բայց դարձեալ մերժումն է ստացել: Վերջապէս քաղաքային վարչութիւնն մօտ անցեալում կայացած իր նիստերից մէկում վճռել է 2 միլ. րուբլու փոխառութիւնը անել կառավարութիւնից: Այդ նպատակով անցեալ օրը քաղաքագլուխ Դր. Բալանթարեան մեկնել է Թիֆլիս Փոխարքայի առաջ միջնորդելու, որ պետական գանձարանից 2 միլ. րուբլի բաց թողնվի Շուշու քաղաքային վարչութեան՝ աւերակները վերանորոգելու համար: Երևի ընթերցողը յիշում է, թէ ինչպէս ֆինանսական մինիստրը մերժեց քաղաքային վարչութեան խնդրած 20,000 ր. նպաստը: Այժմ, երբ 2 միլ. րուբլու հարց է առաջ գալիս, դժուար թէ կառավարութիւնը յարգէ մեր խնդիրը, քանի որ նրա անդամներն էլ դատարկ են, և ինքը կառավարութիւնը փողի մեծ կարիք է զգում: Ժողովուրդը անհամբեր սպասում է պ. Բալանթարեանի վերադարձին Թիֆլիսից:

Լսում ենք, որ պ. Բալանթարեան փոխառութիւնը յաջողութեամբ կնքելուց, որպէս վարձատրութիւն, 10% է ստանալու այդ գումարից...

Ռուստ-Զօն

ԽՐՏՈՒՄՆԵՐ ՇՈՒՇԻ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

I

դեկտեմբերի 3-ին

Ընթերցողի յիշողութեան մէջ երևի դեռ թարմ են այն խլրտումները, որ անցեալ տարի երևան եկան թեմական դպրոցի ներքին կեանքում: Աշակերտութիւնը բազմաթիւ կէտերից բաղկացած մի պահանջագիր էր ներկայացրել դպրոցի վարչութեան և սպառնում էր բաւարար լուծման: Երկար տատանումներից յետոյ դպրոցի վարչութիւնը բաւարարում է աշակերտութեան և բորբոքված ու յուզված սրտերը խաղաղվում:

Մի ամբողջ տարի է անցել այդ ժամանակից, երբ թեմական դպրոցի ներքին կեանքը վերստին յուզվեց ու փոթորկվեց և դրդման առարկայ դարձաւ մեր հասարակական մամուլ կեանքում:

Թեմական դպրոցի պատերի մէջ նորերս տեղի է ունեցել մի միջնադէպ, որ կայանում է հետևեալում:

Անցեալ նոյեմբերի 9-ին աշակերտական միութիւնը ժողով ունէր, ուր քննվում էին դասախօսների և աշակերտութեան հետ ընթերցանութեամբ պարապելու խնդիրները, որ այնքան հրատապ և կենդանի էր հէնց աշակերտութեան շահերի տեսակէտից: Դպրոցի բարձր դասարանների աշակերտների մի խումբ գալիս է դպրոց և քաղաքավարի կերպով խնդրում, որ իրանց թոյլ տան ներկայ լինելու ժողովում: Ժողովի կողմից դուրս է գալիս դպրոցի ուսուցիչ պ. Արտաշէս Մելքոնեան և յայտնում աշակերտներին, որ այսօր չի կարելի ներկայ լինել: Վերջինները պատասխանում են, որ մենք ձեզ հետ գործ չունենք, քանի որ ժողովից ենք թոյլտւութիւն խնդրում: Պ. Մելքոնեան բորբոքված այդ բանի վրա, թոյլ է տալիս իրան փողոցային խօսքեր ուղղել աշակերտներին և յայտնում է ժողովում թէ սրանք աշակերտներ չեն, աւելի յարմար է գրվել...

Աշակերտները իրանց պատիւը շօշափված զգալով՝ մի շարք ժողովներ են անում, ուր վճռվում է միջնորդ դատարանով իրանց պատիւը վերականգնել: Միջնորդ դատարանը կազմվում է, որ ունենում է մի քանի նիստեր, բայց վերջը «տուր ու դմբոցով» ցրվում է: Այնուհետև աշակերտները վճռում են իրանց դասը իրանք վարել և պահանջել դպրոցի վարչութիւնից, որ արձակէ պ. Արտաշէս Մելքոնեանին, որպէս անարժան և իր կոչման միանգամայն անհամապատասխան ուսուցչի: Աշակերտները բաժանված են երկու բանակի. մի աննշան մասը, թւով 8—10 հոգի, ուսուցչի կողմն է, իսկ մեծ մասը հակառակ ուսուցչի, որ անպայման հեռացումն է պահանջում դպրոցից: Դպրոցական այդ միջնադէպի առիթով, բարձր դասարանների աշակերտները, բաժանված երկու հակառակ բանակի, հետևեալ թռուցիկներն են բաց թողել, որ խնդիրը աւելի լուսաբանված լինելու համար, նպատակայարմար ենք համարում ամբողջովին առաջ բերել, որից ընթերցողը շատ բան կարող է իմանալ...

(Կը շարունակվի)

ՄԻ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆ

(Վ. Գոլցեվի մահվան առիթով)

Նորերս գերեզման իջաւ ռուս հրապարակախօս Վ. Գոլցեվը, որ գլխաւոր ղեկավարն էր «Р. Мысль» ամսագրի, Մոսկվայի նշանաւոր գրողներից մէկն էր և ուսանողական ու ինտելիգենտական խմբակներին առանձին յարգանք էր վայելում երիտասարդութեան շրջանում:

Ես առիթ եմ ունեցել ծանօթանալու հանգուցեալ Վ. Գոլցեվի հետ Մոսկվայում այն ժուր-ֆիքսներում, որ տեղի էին ունենում տիկին Մ. Գորբունովայի մօտ ուսանողական թէականների առաջին տարիներում:

Այդ ժուր-ֆիքսներում լինում էին գրական գործիչներ, ստուդենտներ, համալսարանական գործիչներ: Այդտեղ մարդիկ ծանօթանում էին միմեանց հետ, վիճում էին ժամանակակից խնդիրների մասին և պարզում գաղափարական հարցեր: Այդ ժուր-ֆիքսներից յիշում եմ Մոսկվայի յայտնի ստատիստիկ Վ. Օրլովին, Ն. Կարլուկովին, Ֆորտունատովին, Վ. Գոլցեվին, Խարիզոմենովին, Պուգաչովին և այլն:

Երբ իմ ճանապարհորդութիւններից վերադառնում էի Մոսկվա և առիթ ունէի մնալ այնտեղ մի քանի շաբաթ, ուրախութեամբ յաճախում էի այդ երեկոյթները: Ստատիստիկներից մի քանիսն էլ իրանց Մոսկվա եկած ժամանակ գալիս էին երեկոյթներին: Լինում էին և Պետերբուրգից հիւրեր:

Մտքի և տպաւորութիւնների փոխանակութիւնը թարմացնող և ոգևորող ազդեցութիւն էր անում բոլորիս վրա:

Երեկոյթներից մէկում ջերմ խօսակցութեան առարկայ էր նարօդնիկութիւնը:

Իւրաքանչիւր մարդ իր կերպ էր հասկանում նարօդնիկութեան էութիւնը:

Պէտք է նկատել, որ ռուսաց գրականութեան մէջ նարօդնիկների շարքերում գործում էին զանազան տեսակ մարդիկ: Ուստի և ընդհանուր բնորոշում անել դժուար էր լինում:

Պ. Օրլովը դիմեց Վ. Գոլցեվին հետևեալ հարցով.

—Վիկտոր Ալեքսանդրովիչ, դուք ծանօթ էք եւրոպական քաղաքական և հասարակական հոսանքների հետ, ասացէք խնդրեմ, կա՞յ կամ եղել է Գերմանիայում, Ֆրանսիայում կամ ուրիշ տեղ նարօդնիկութեան նման ուղղութիւն:

Գոլցեվը մի փոքր մտածելուց յետոյ պատասխանեց:

—Ներկայումս, ասաց նա, ուրիշ երկիրներում չը կայ նարօդնիկութիւն. ինչ վերաբերում է անցեալին, ես յատուկ ուսումնասիրութիւններ չեմ արել, բայց յանդգնութեամբ կարող եմ ասել, որ նման շարժումներ եղել են օրինակ Գերմանիայում, երբ «Sturm und Drang»-ի շրջանում և նրանից յետոյ երևաց մեծ հետաքրքրութիւն դէպի գերմանական ժողովուրդը, նրա առանձնայատկութիւնները, նրա ոգին և ստեղծագործութիւնները: Մեր ռուսական նարօդնիկութիւնը և գերմանականը, տարբեր ժամանակի արդիւնքներ լինելով, տարբեր են և իրանց բովանդակութեամբ ու գործնական արտայայտութիւններով, բայց ունեն նման բնաւորութիւն:

—Կարծո՞ւմ է արդեօք, հարցրեց Օրլովը, մեր նարօդնիկութիւնը երևան գալ Եւրոպայում:

—Չեմ կարծում, պատասխանեց Գոլցեվը, որովհետև այնտեղ պարլամենտական կեանքը, խօսքի ազատութիւնը մեծ չափումներ են առաջացնում և ազգաբնակութեան զանազան մասերը միասին մշակում են իրանց հասարակական կեանքը: Իսկ մեզանում մենք կտրված էինք ժողովրդից և այժմ երբ մօտենում ենք ժողովրդին նոր միայն ծանօթանում ենք նրա հետ:

Այնուհետև խօսակցութիւնը անցաւ նարօդնիկների ծրագիրներին:

—Նարօդնիկներից մի քանիսը, նկատեց Գոլցեվը, մօտենում են սլաւեանոֆիլներին և պահպանողականներին, իսկ միւսները հանդէս են գալիս իբրև արմատականներ և սոցիալիստներ: Նարօդնիկ խօսքը դեռ մի որոշ ծրագրի արտայայտութիւն չէ:

Ուրիշներն էլ ասին իրանց հետաքրքրական նկատողութիւնները:

Ես պատմեցի իմ այցելութիւնը Էնգելհարդին և նրա հետ ունեցած խօսակցութիւնները նարօդնիկութեան մասին:

Ա. Քալանթար

ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

Նոյեմբերի 25-ին մի ամբողջ շարք ուսանողական ընդհանուր ժողովներից յետոյ Պետերբուրգի հոգևոր ճեմարանում վերջնականապէս ընդունվել ու հաստատվել էր յատուկ մասնաժողովի մշակած Պետերբուրգի հոգևոր ճեմարանի ուսանողութեան ներկայացուցիչների խորհուրդի կանոնադրութիւնը: Հոգևոր ճեմարանի ուսանողութիւնը կանոնաւոր կերպով կազմակերպելու պահանջը մանաւանդ զգալի դարձաւ ճեմարանի ինքնավարութեան համար սկսված անցեալ տարվայ շարժման ժամանակ: Զօրս ճեմարանների ընդհանուր ուսանողութեան պատգամաւորական համագումարը, որ կայացաւ Պետերբուրգում անցեալ տարի Զատկի օրերում, անհրաժեշտ համարեց ինքնավարութեան համար պայքարում աջողութեամբ կռիւ մղելու նպատակով կազմակերպել հոգևոր ճեմարանների ուսանողութիւնը: Ներկայ ուսումնական տարվայ սկզբում կազմակերպվեցին Մոսկվայի ճեմարանի ուսանողները, այժմ պատգամաւորական համագումարի որոշումները արդէն իրագործված են և Պետերբուրգի ճեմարանում: Ներկայացուցիչների խորհրդի համար ընտրութիւնները կը կատարվին Գերի եղանակով: Այդ պատճառով ներկայումս ճեմարանի ուսանողները համախմբվում են կուրսակցութիւնների շուրջը, խմբակներ են կազմում իրանց թեկնածուներին խորհուրդի անդամ ընտրել տալու համար: Արդէն կայացել է ուսանողութեան արմատական ոգով տրամադրվածների ժողովը, որոնք միացել են հետևեալ ընդհանուր սկզբունքներով.

1) Կռուել սինոդական եկեղեցու և նրա ուղղափառութեան դէմ, արձագանք տալ պաշտօնական եկեղեցու այն բոլոր քայլերին, որ կանէ նա հասարակական քաղաքական անցքերի վերաբերմամբ:

2) Ակտիւ կերպով ձգտել ճեմարանի վերակազմութեանը ազատական սկզբունքներով կրթականի կողմից և ինքնավարութեան՝ ուսանողութեան կեանքում:

3) Կապ հաստատել ընդհանուր ուսանողական կազմակերպութեան հետ ներկայացուցիչների խորհրդի միջոցով:

—Նոյեմբերի 29-ին «РѢчь» լրագիրը հեռագիր է ստացել Խարկովից, որ տեղական ռէալական դպրոցում խառնակութիւն է սկսվել ուսուցիչ Կոտկովի սև հարիւրակային ագիտացիայի պատճառով: VII դասարանի աշակերտները, հիմնվելով դպրոցի մէջ քաղաքականութիւն մտցնելու արգելքի վրա, պահանջել են վերջ տալ մարդատեացութեան գաղափարի պրօպագանդային: Երբ դպրոցի վարչութիւնը փակել է VII րդ երկու դասարանները, բողոքող աշակերտներին իսկոյն միացել են բոլոր դասարանները: Խորհրդի որոշման համաձայն, արտաքսվել են 60 աշակերտներ, և դպրոցը փակված է մի ամբողջ շաբթով: Այդ դէպքի պատճառով յուզմունք է սկսվել և միւս դպրոցներում:

—Ուսանողների և ազատ ունկնդիրների ընդունելութիւնը Մոսկվայի համալսարանում մինչև այժմ կատարվել է տարեկան մի անգամ, աշնանը միայն. իսկ նոր կանոնադրութիւնը և դասաւանդութեան առարկայական եղանակը մտցնելուց յետոյ մտադրութիւն կար ընդունելութիւն նշանակել և յունվարին, այսինքն տարեկան երկու անգամ: Ներկայումս շատ շատերը դիմում են անում և հարցնում այդպիսի ընդունելութեան մասին: Ցանկանալով, կարելի եղածին չափ, բաւարարութիւն տալ բազմաթիւ դիմողների կրթութեան ձգտումներին, համալսարանի վարչութիւնը, ինչպէս լսել է «ВѢкъ» լրագիրը, կը նշանակի յունվարի ընդունելութիւնը, երբ ֆակուլտետները կորոշեն թէ հնարաւոր է, արդեօք, այժմ աւելացնել ունկնդիրների թիւը և, եթէ հնարաւոր է, որքան հոգի նորից կարելի է ընդունել: Այդ հարցը լուծումն կը ստանայ ֆակուլտետների դեկտեմբերեան նիստերում:

ՖԻՆԼԱՆԴԱԿԱՆ ՍԵՆԱՏԻ ՆՈՐ ՆԱԽԱԳԻԾԸ

Ինչպէս յայտնի է, ֆինլանդական սենատը, պատրաստակամութիւն յայտնելով ռուսաց կառավարութեան պահանջի համաձայն յանձնել այն ռուսաց հպատակներին, որոնք յանցանք են կատարել Ռուսաստանում, վերջին ժամանակներս Բարձրագոյն հաստատութեան էր ներկայացրել անցագրային մի նոր նախագիծ Ֆինլանդիա գնացող ռուսաստանցիների մասին: Ինչպէս հաղորդում է «Nya Pressen» լրագիրը, նախագիծը ներկայացնելով գեներալ-նահանգապետ Զեյգերը իր գլուխով աւելի է լիբերալ հանդիսանում, քան ինքը ֆինլանդական սենատը: Նա գտնում է, որ նախագծի պահանջը, որպէսզի Ֆինլանդիա գնացող ռուսաստանցիները անցագրեր ունենան յատկապէս Ֆինլանդիայում ճանապարհորդելու համար, չափազանց ծանր կարող էր լինել այն բազմաթիւ անմեղ մարդկանց համար, որոնք իբրև տուրիստներ, ամառանոց գնացողներ և այլն շարունակ յաճախում են Ֆինլանդիա: Նրա կարծիքով, բաւական կը լինէր և այն, եթէ որ ռուսները ներկայացնէին որևէ վկայական իրանց անձի մասին, սովորական անցագիր, արտասահմանեան անցագիր և ուրիշ վկայականներ: Ապա, սենատի նախագիծը ստեղծում է մի ուրիշ բոլորովին բացառիկ դրութիւն ևս ռուսաստանցիների համար նրանով, որ նա տուգանք է սպառնում, եթէ եկւոր ռուսը առաջին օրվայ ընթացքում չի ներկայացնի իր անցագիրը: Մինչդեռ ֆինլանդական հին օրէնքով, որը այժմ մնացած տառ է դարձել, Ֆինլանդիա եկող օտարահպատակները պարտաւոր են ներկայացնել իրանց անցագիրը առաջին ութ օրվայ ընթացքում: Գեներալ-նահանգապետը առաջարկում է, որ օտարահպատակների իրաւունքները հաւասարվին ռուսների իրաւունքների հետ: Բացի դրանից, Զեյգերը առաջարկում է այդ նախագիծը նախ քան կայսրին ընծայելը ներկայացնել ներքին գործերի մինիստրին, որովհետև այդ առիթով ցուցմունքներ պէտք է տայ ռուս իշխանութիւնը: Այդ բանը նա ցանկալի է համարում, որովհետև հարց է յարուցված անցագրերը վերացնել Ռուսաստանում, իսկ այդ հարցի հետ կապ ունի սենատի նախագիծը:

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԵՒ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

Սօցիալ-դեմօկրատական կուսակցութեան մեծամասնական ֆրակցիան խիստ դժգոհութիւն է յայտնում սօցիալ-դեմօկրատական կուսակցութեան մօտ ժամանակներս կայացած համառուսական կոնֆերենցիայում ընդունած բանաձևերի համար, որոնք առաջարկվում են ընտրութիւնների ժամանակ համաձայնութիւն կայացնել ոչ պրոլետարական կուսակցութիւնների հետ: Մեծամասնականների կենտրոնական օրգանն «Пролетарій», այժմ ֆրակցիայի առաջ դնում է հետևեալ հարցը. սօց.-դեմ. համաձայնութիւնը կադետների հետ չէ՞ պահանջում, արդեօք, կազմակերպչական յարաբերութիւնների լիակատար խզումն, այսինքն, պառակտում. «Пролетарій» լրագրի խմբագիրը շտապում է այդ հարցին պատասխանել բացասաբար: Եւ ահա թէ ինչու: Համառուսական կոնֆերենցիայի որոշումները նա ոչ ոքի համար պարտադիր չէ համարում: Այդ կոնֆերենցիայի հետևանքը կը լինի այն, որ մեծամասնականների և փոքրամասնականների տակտիկական հայեացքների տարբերութիւնը կը պարզվի ամբողջ կուսակցութեան համար, և տեղական կուսակցական կազմակերպութիւնները, որոնք պէտք է հրաւիրեն յատուկ տեղական կոնֆերենցիաներ ընտրութիւնների վերաբերեալ հարցերը քննելու համար, հնարաւորութիւն կունենան ընտրելու երկու պլատֆորմաներից մէկն ու մէկը: Սակայն այստեղ մի ուրիշ դժուարութիւն է ներկայանում մեծամասնականների համար: Կոնֆերենցիայի որոշումները թէև պարտադիր չեն, սակայն նրանք դառնում են դիրեկտիւներ առաջարկված կուսակցութեան կենտրոնական կոմիտեի կողմից, որին նրանք մինչև կուսակցութեան նոր համագումարը ստիպված պիտի լինեն հնազանդվել: Դրա հետ «Պրոլետարին» համարում է հետևեալը: Տեղական պառակտումների առաջն առնելու համար կոնֆերենցիան մի բանաձև է ընդունել, որի հիման վրա կենտրոնական կոմիտեն կարող է արգելել տեղական կազմակերպութիւններին դնելու ոչ զուտ սօցիալ-դեմօկրատական ցուցակներ, բայց չը պէտք է էլ պարտաւորեցնէ նրանց դնելու ոչ զուտ սօցիալ-դեմօկրատական ցուցակներ.

—«Страна» լրագիրը հաղորդում է, որ Նովգորոդի սօցիալ-դեմօկրատական կոմիտեն, որ գլխաւորապէս բաղկացած է «մեծամասնականներից», ուղարկել է իր կազմակերպութիւններին, որոնց թւում և «շրջանայիններին», որ բացառապէս գործ ունէր գիւղի հետ, դիրեկտիւներ, որով արգելում է համաձայնութիւն կայացնել ընտրութիւնների ժամանակ կադետների հետ գիւղերում: Այդ դիրեկտիւներին գիւղական կազմակերպութիւնները վերաբերվել են թշնամաբար, որովհետև առանց համաձայնութիւն կայացնելու անհնարին է նոյնիսկ փոքր ի շատէ պրոգրեսիվ պատուիրակներ ընտրել, իսկ Մակարևեվսկի գաւառի Լեսկովո գիւղում պէտք է կամ ընտրվի սև հարիւրակային տեղական ռուսաց ժողովրդի դաշնակցութեան լիդեր Պրոտոպոպովը, կամ զեմստվօյին վարչութեան նախագահ ձախակողմեան կադետ Իկոննիկովը: Մօտ օրերս այդ հարցը քննվել է շրջանայինների կազմակերպութեան մէջ, որտեղ մեծամասնութիւնը այն կարծիքին է յայտնել, որ աւելի լաւ է անցնի Պրոտոպոպովը, միայն թէ ոչ կադետ Իկոննիկովը: Մինչդեռ Լեսկովի բնակիչները, որ բանւորներ են և սօցիալ-դեմօկրատներ վճռել են չենթարկվել իրանց կազմակերպութեան այդ դիրեկտիվին և ձայն տալ կադետին:

—Նոյեմբերի 26-ին Մոսկվայում «Նոյեմբերի 17-ի դաշնակցութիւնը» ունեցել է մի շարք ժողովներ, որտեղ հանդէս են եկել կամ փորձ են արել խօսելու «ժողովրդական ազատութեան» կուսակցութեան անդամները:

Մոսկվայի լրագիրները հետաքրքիր մանրամասնութիւններ են հաղորդում: Հացի շուկայի շինութեան մէջ կայացած շրջանային ժողովում ամբիոն է բարձրացել Ա. Կիզեվետտերը, որ մի ընդարձակ ճառ է արտասանել մինիստրների պատասխանատուութեան մասին, իբրև անհրաժեշտ պայման մեր պետական անտեսութեան բարւոքման համար: Նախագահի և հանդիսականների մի մասի կողմից երկու անգամ ընդհատվելով թէև այդ ճառը, բայց և այնպէս մեծ աջողութիւն ունեցաւ և բուռն ծափահարութիւնների արժանացաւ: Ժողովի վերջում բազմաթիւ հասարակութիւնը շրջապատելով Կիզեվետտերին շնորհակալութիւն յայտնեց և խնդրեց այսուհետև էլ յաճախել իրանց ժողովներին:

—Պրեսնենսկի շրջանում ժողովրդական ազատութեան կուսակցութեան կողմից խօսեցին Մակլակով, Միլիւկով, և Չելնոկով, որոնց ճառերը նոյնպէս արժանացել են աղմկալի ծափահարութիւնների: Պրեչիստենսկի և Խամովնիչեսկի մասերում կադետներին թոյլ չեն տուել խօսելու —«Հոկտեմբերեանների» բանը բուրդ է!

ԵՐԿՈՒ ՆՈՐ ՕՐԷՆՔՆԵՐ

Ինքն իրան «սահմանադրական» հռչակող ու «լիբերալ» յորջորջող պ. Ստոլիպինը, ամբողջ ամիսներ ճնշելուց յետոյ, հազիւ հազ կարողացաւ ռեպրեսիաներից աչք բաց անել ու մի «լիբերալ» օրէնք հրատարակել վերջապէս: Այդ օրէնքը նախաջրհեղեղեան ժամանակներից մնացած մեր անցագրային սիստեմին է վերաբերում: Այս նոր օրէնքի համաձայն,—որը թէև հրատարակվել էր հոկտեմբերի 5-ին, բայց, ըստ սովորականի, բիւրօկրատիայի ձեռքով մշակված բոլոր օրէնքների նման յատուկ բացատրութիւնների կարօտ էր, ուստի և մեր բարի մինիստրը բարեհաճել է վերջերս մի յատուկ շրջաբերականով մի շարք մեկնութիւններ տալ նրա մասին,—այսուհետև գիւղացիք, մեշչանները և միւս բոլոր հարկ վճարող դասերը իրաւունք ունեն, ազնւականների և միւս արտօնեալ դասերի նման, անցագրային գրքոյկներ ստանալ անսահման ժամանակով: Բացի դրանից, այսուհետև անցագիր վերցնելու համար, ոչ թէ մարդիկ պիտի անպատճառ դիմեն իրանց ծննդավայրի մեշչանական կամ այլ վարչութիւններին, այլ և կարելի է անցագիր ստանալ իր ապրած քաղաքի ոստիկանապետի վարչութիւնից, իսկ մայրաքաղաքներում նոյն իսկ թաղական պրիստաւի կանցելարիայից: Անցագիր կարելի է վերցնել կամ ներկայացնելով արդէն հնացած անցագիրը և կամ մի որևէ այլ դօկումենտ, որով կարելի լինի միայն իմանալ, թէ ով է անցագիր պահանջողը:

Այդ նոր օրէնքի ու նրան մեկնաբանող շրջաբերականի համաձայն, այսուհետև չը վճարված հարկերը ու ապառիկ մնացած տուրքերը (недоимки) ոչ մի կերպ չեն կարող անցագիր չը տալու պատճառ լինել: Ոստիկանութիւնը ազատվում է այն պարտաւորութիւնից, որ նա ստիպված էր հետևելու, որ իրանց բնակավայրից դուրս ապրող մարդիկ նոր անցագիր ուզելու ժամանակ անպատճառ վճարած լինէին իրանց վրա մնացած ապառիկ տուրքերը: Այլ ևս ոստիկանութիւնը այդ կարգի գործերի մէջ չը պէտք է խառնվի և պարտաւոր է անցագիր տալ ամեն ուզողի, առանց հետաքրքրվելու, թէ նրա վրա ապառիկ տուրքեր կա՞ն մնացած, թէ ո՛չ:

Նոր օրէնքով ոչնչացնվում է գիւղական և մեշչանների ժողովների այն իրաւունքը, որ նրանք կարող էին այս կամ այն պատճառով անցագիր չը տալ մէկին և կամ նոյն իսկ գրաւել ունեցած անցագիրը: Այդպիսի իրաւունք մինչև այժմ ունէին և ընտանիքի մեծերը իրանց կրտսերների վերաբերեալ, թէկուզ սրանք չափահաս էլ լինէին. երբ հաճելի չէր լինում, որ սրանք իրանց բնակավայրից օտարութեան գնան, «մեծերը» միշտ իրաւունք ունէին դրանց «պասպորտը կալել տալ»: Նոր օրէնքով մեծերի այդ իրաւունքն էլ է ոչնչացվում: Այսուհետև ոստիկանութիւնը իրաւունք չունի ո՛չ ապառիկ տուրքերի համար, ո՛չ համայնքի կարգադրութեան և ո՛չ էլ ընտանիքի մեծի խնդիրքի համաձայն որևէ մէկի ձեռքից ունեցած անցագիրը խլել: Եւ եթէ ներկայումս այդպիսի խլված անցագրեր կան, նրանք անմիջապէս պիտի վերադարձվեն:

Այս նոր օրէնքով, ինչպէս տեսնում էք, գիւղական, մեշչանական և այլ վարչութիւնները միանգամայն ազատվում են անցագրերը տալու բաւական կնճռոտ հոգսից, իսկ միևնոյն ժամանակ նրանք և զրկվում են այն ամենազօրաւոր զէնքից, որի միջոցով կարողանում էին իրանց ապառիկ մնացած տուրքերը ստանալ: Բայց դրա համար թող իրանք այդ վարչութիւնները խորհեն ու աւելի մարդավայել միջոցներ գտնեն, տուրքերը հաւաքելու համար, քան այն ոստիկանական միջոցը, որի շնորհիւ հազարաւոր մարդիկ զրկվում էին ազատ շրջագայելու իրաւունքից և հազար ու մի տեսակ անախորժութիւնների էին հանդիպում:

Բայց անցագրային օրէնքով չէ սահմանափակվում պ. Ստոլիպինի «լիբերալիզմը»: Նա նոյեմբերի 15-ին մի ուրիշ նոր օրէնք էլ է հրատարակել. դա վերաբերվում է գործակատարների և կանտօրներում ծառայողների «Նորմալ հանգստութեանը»: Այդ օրէնքի համաձայն, գործակատարներն ու ծառայողները պէտք է օրական 12 ժամից աւելի չաշխատեն, բացի մի քանի բացառիկ օրերից (տարվայ մէջ), երբ թոյլատրվում է 14 ժամ աշխատել: Բացառութիւն են կազմում ճաշարանները, գինետներն ու բաղնիքները, որոնք օրվայ մէջ 15 ժամ կարող են բաց լինել: Այդ՝ օրէնքով թոյլատրված՝ ժամերից աւելի կարելի է աշխատել մասնաւորապէս բացառիկ դէպքերում և այն էլ գործատիրոջ ու ծառայողի փոխադարձ համաձայնութեամբ և առանձին վարձով: Բացի դրանից, նոր օրէնքի համաձայն բոլոր խանութները և կանտօրները այսուհետև անպատճառ պիտի փակվեն կիրակի և տօնական տօների օրերը և էլի մի քանի տօներին, որոնց մասին առանձին պիտի յայտնվի: Օրէնքի այս կէտը չէ վերաբերվում, ի հարկէ, հիւրանոցներին, երկաթուղիների ու նաւերի բուֆետներին և այլ այդ կարգի հիմնարկութիւններին: Բացառութիւն են կազմում և դեղատները:

Այդ օրէնքը տարածվում է և արհեստանոցներում աշխատող բանւորների վրա, որտեղ նոյնպէս իբրև աշխատանքի նորմալ չափ ընդունվում է 12 ժամը, իսկ բացառիկ օրերի համար (տարվայ մէջ 60 օր) 14 ժամ, դրա մէջ հաշվելով և այն 2 ժամը, որ պիտի տրվի բանւորներին կերակուր ուտելու համար: 17 տարեկանից պակաս արհեստաւոր-բանւորներին օրական 3 ժամ ժամանակ պիտի տրվի ուսումնարան յաճախելու համար, եթէ միայն նրանց աշխատած արհեստանոցներում աշխատանքը շարունակվում է առնուազն 6 ժամ օրական:

Մի խօսքով, ինչպէս տեսնում էք, լիբերալիզմը կատարեալ է: Մենք չենք ուզում այդ օրէնքի մանրամասն քննութեան մէջ մտնել, որովհետև նախ այդ մեզ շատ հեռու կը տանէր, և երկրորդ «լիբերալ» մինիստրի հաւակնութիւնը օրավարձով աշխատողների նորմալ աշխատանքի ու նորմալ հանգստութեան մասին այն աստիճան ակնյայտնի կերպով տարբերվում է հէնց այդ աշխատաւորների ցանկութիւնից ու դրված պահանջներից, որ դուցէ աւելորդ էլ կը լինի դրա մասին երկար խօսելը:

Ամենաաչքի ընկնող հանգամանքը այն է, որի վրա էլ հէնց իր ուշադրութիւնը դարձրեց ամբողջ իսկական լիբերալ մամուլը, որ պ. մինիստրը իր այդ օրէնքը հրատարակեց հէնց այնպիսի մի ժամանակ, երբ այդ աշխատաւորների կողմից, որոնց վերաբերվում է օրէնքը, և ոչ մի շարժում, ոչ մի խլրտում չը կայ: Դուրս է գալիս, որ Ստոլիպինը բոլորովին իր ինքնայօժար կամքով գործակատարներին մի գեղեցիկ ընծայ է բերում, մինչդեռ նա ունելիքներով նոյն գործակատարների ու արհեստաւոր-բանւորների ատամներն էր քաշում, երբ նրանք «Նորմալ հանգստութիւն» էին պահանջում:

Լիբերալ մամուլը շատ իրաւացի կերպով կասկածում ու այն կարծիքն է յայտնում, որ այդ օրէնքը մի նախընտրական նուէր է, որով պ. մինիստրը ցանկանում է գործակատարների սրտերը շահել ու նրանց քուէները կառավարութեան օգտին շուռ տալ...

Բայց մի՞թէ գործակատարները յիրաւի այն աստիճան դեռ անգիտակից ու մոռացկոտ են, որ շլանան այդպիսի՝ ինքնըստինքեան նշանակութիւնից զուրկ՝ ընծաներով ու դեռ երէկվան իրանց ակռաները հանող՝ ունելիքները մոռանան...

Խ. Ազատ

ԴԱՐՁԵԱԼ ԳՈՒՐԿՈՅԻ ԳՈՐԾԻ ՄԱՍԻՆ

Պ. Վ. Վոդովոզովը «Товарищъ» թերթում յիշեցնում է պատգամաւոր Ալադինի այն խօսքերը, որ նա առաջին Պետական Դումայում արտասանեց, երբ մինիստրութիւնը պահանջում էր, որ սովեալներին օգնելու համար յատկացված միլլիոնները, առանց հասարակական կօնտրօլի, կառավարութեան յանձնվի ի կարգադրութիւն:

—Ամեն անգամ, երբ միլլիոններ ծախսելու խնդիր է լինում,—ասաց այն ժամանակ Ալադինը,—պ. պ. մինիստրները շատ ժամանակին են Դումա գալիս, և մենք գիտենք, թէ ինչու համար են նրանք այդպէս շտապում. ծախսվելիք գումարների 3/4 մասը մնում է մինիստրների ու մինչև իրանց ամենավերջին սպասաւորների գրպաններում... Ուստի ժողովրդին կողոպտելու համար, դուք երբէք չէք ուշանում, պարոնայք մինիստրներ!

Ներքին գործերի մինիստր Ստոլիպինը այն ժամանակ սաստիկ զայրացաւ պատգամաւոր Ալադինի այդ խօսքերից և զրպարտութիւն անուանեց նրա ասածները:

Յիշելով այժմ սրանից ընդամենը մի քանի ամիս առաջ արտասանված Ալադինի այդ խօսքերը և պ. մինիստրի զայրոյթը, շատ հետաքրքիր է իմանալ, թէ արդեօք Ստոլիպինը չէ՞ զղջում իր անտեղի զայրոյթի համար, քանի որ հազիւ մի քանի ամիս անցած՝ նա իր աչքով տեսաւ, թէ ինչպէս, ինչ քանակով և ում գրպաններն են մտել իր օգնական Գուրկոյի գրամադրութեանը յանձնված միլլիոնները:

Ինչպէս տեղեկանում ենք լրագրներից, Ստոլիպինը հիմա էլ սաստիկ զայրացած է երեւում, բայց, ի հարկէ, ոչ Ալադինի դէմ, այլ իր օգնական Գուրկոյի: Գուրկոն շատ անհնարին կերպով է կատարել իր... գործութիւնը: Բիւրոկրատիայի համար ամենից գլխաւորն է ձևը և ոչ թէ գործի էութիւնը: Եւ հէնց այդ ձևը փչացնելու համար, պ. մինիստրը պահանջում էր, որ Գուրկոն անպատճառ դատարանի յանձնվի: Բայց այս անգամ, ինչպէս ռուսներն են ասում, գերանդին քարի հանդիպեց. ինչպէս որ սրանից մի քանի օր առաջ ասել էինք, Գուրկոն այնպիսի անպաշտպան էակներից չէ, որին կարելի լինէր «չնչին» բանի համար դատարանների դուռը քարշ տալ: Նա բազմաթիւ պաշտպաններ ունի թէ «բարձր շրջաններում» և թէ «իսկական ռուս մարդկանց» բանակում: Այդ պաշտպանները ուղղակի ասում են, թէ ինչպէս կարելի է Գուրկոյի նման «հայրենասէր» մարդուն, որը Պետական Դումայի ամենակատաղի թշնամիներից ու նրան ցրել տուողներից մէկն էր, դատաստանական քննութեան ենթարկել ու արատաւորել:

Ստոլիպինը շատ աշխատեց, շատ տանջվեց այդ խնդրի առիթով և հազիւ հազ, կայսրի միջնորդութեան շնորհիւ, կարողացաւ վերջապէս մի քննիչ յանձնաժողով նշանակել տալ, որպէսզի Գուրկօ-Լիդվալի գործը քննի:

Թէև այդ յանձնաժողովի մինչև այժմ կատարած քննութիւնից երևացել է, որ Գուրկօ-Լիդվալի ձեռքերում հալվել են ոչ թէ 800 հազար րուբլի ինչպէս յայտնվել էր առաջին անգամից, այլ միլլիոնից էլ աւելի, այնուամենայնիւ յանձնաժողովը որոշել է այնպէս անել, որ դատարանի ենթարկվի միմիայն Լիդվալը, իսկ Գուրկոն... ինքնակամ կերպով հրաժարական պիտի տայ իր պաշտօնից... Այդպիսով, ի հարկէ, նա բոլորովին մաքուր ու անաղարտ դուրս կը գայ ջրից և... մի քանի ամսից դուցէ և շաբաթից յետոյ կը նշանակվի մի նոր բարձր պաշտօնի, որտեղ նա նոր միլլիոններ կը գտնի...

Բ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

(Բենեֆիս Աբելեանի)

Երկուշաբթի, դեկտ. 11-ին, հայ դրամատիկական խումբը պէտք է ներկայացնէ դերասան Յ. Աբելեանի բենեֆիսին Սարդուի յայտնի «Հայրենիք» պիէսը, որ երկար ժամանակ արգելված էր և միայն անցեալ տարի գրաքննութիւնը թոյլատրեց ներկայացնել նաև հայ բեմի վրա: Պիէսայի սիւժէտը վերաբերում է ֆլամանդական ձգտումներին՝ թօթափելու սպանական լուծը: Թէ պիէսայի արժանաւորութիւնները, թէ բենեֆիցիանտի՝ հայկական բեմի այդ բեղմնաւոր և տաղանդաւոր գործչի ծառայութիւնները, պէտք է զօրեն խթան հանդիսանան հայ հասարակութեան՝ լցնելու երկուշաբթի օրը հայոց թատրոնը:

ՍՈՒԼԷՅՄԱՆ-ԽԱՆ ՇԵԲԻՆՍԿԻ

Շուշի քաղաքում, մի հիւրանոցում, որի անունը չեմ յիշում, ամբողջ օրը սպասելուց յետոյ, վերջապէս երեկոյեան, արևը մայր մտնելու միջոցին, սպասաւորը յայտնեց ինձ, որ կառքը պատրաստ է:

—Գնա, քո հէրն էլ անիծած,—փնթփնթաց Սաքուլը*),—քաղաքներ շատ եմ տեսել, բայց Շուշու պէս թարս քաղաք տեսած չեմ:

—Վեր կաց, կապիր պայուսակը,—ընդհատեցի նրա խօսքը:

—Սղնախեցիք խօ զուլումաղներ են,—դանդաղութեամբ վեր կենալով շարունակեց նա,—բայց շուշեցիք զուլումաղների զուլումաղներն են եղել:

—Շտապիր, ապա թէ ոչ կուշանանք:

—Ոտներս ջարդեցի այս անտէր փողոցներում: Ափսոս չէ՞ Գանձակը:

—Պինդ կապիր փոքրիկ պայուսակը:

—Գժեր են եղել այստեղացիք,—իրերը կառքի բերելով շարունակում է խօսել Սաքուլը, —թէ Շուշի է, Ղալա էլ ո՞րն է, թէ Ղալա է, Շուշի էլ ո՞րն է:

Նրա դժգոհ լինելու իսկական պատճառն այն էր, որ պօստի կայարանում ձի չը կար, և մենք ստիպված էինք առանձնական փոխադրքով երեկոյեան ճանապարհվելու: Քաղաքն ու բնակիչներին պախարակելուց յետոյ, անցաւ նրանց կերակուրներին, հացին, պանրին:

—Ես սապոն կարծեցի,—շարունակեց քթի տակ խօսել Սաքուլը,—ասացին պանիր է... Լսեցի՞ր, ինչպէս էր զանգահարում ժամկոչը՝ էն սարսաղը:

Այդ միջոցին դուռը բացվեց և ներս մտաւ թուխ դէմքով հասակաւոր մի տղամարդ, որ իրան անուանեց Սուլէյման-խան Շեբինսկի: Իրար հետ ծանօթանալուց յետոյ պարզվեց, որ նա էլ մեզ նման մտադիր է Գորիս գնալ:

—Մենք պօստի կայարաններ ունենք լոկ այն բանի համար, որ երբ հարկաւոր լինի մի տեղ գնալ, ձի չի ճարվի,—ժպտալով խօսեց նա.—եկել եմ ձեզանից խնդրելու, որ պէտքի ինձ էլ ձեզ հետ տանէք Գորիս:

Յայտնեցի իրան, որ ուրախ եմ: Նա ինձ վրա լաւ տպաւորութիւն գործեց: Պարզ երևում էր, որ խելօք և համեստ մարդ էր:

*) Անմոռանալի ուղեկիցս, որը այլ ևս գոյութիւն չունի:

—Բաւական վարժ էք խօսում ռուսերէն,—նկատեցի ես։

—Գիմնազիայի մինչեւ հինգերորդ դասարանն հասել եմ։

Ցաւ յայտնեց չաւարտելու նկատմամբ։

—

Արդէն քիչ մութ էր։ Երբ մեր կառքը դժուարութեամբ բարձրանալով հասաւ քաղաքի ամենաբարձր կէտին, ուր շինութիւնները վերջանում են և ուր մի աղբիւրի մօտ բազմաթիւ Թուրք կանայք են հաւաքվել, Սուլէյման-խանը իմ ուշադրութիւնը դարձրեց այդ աղբիւրի վրայ։

—Դա ի՞նչ բան է,—հարցրի ես։

—Թամրիեանի աղբիւրն է։

—Որին անցեալ տարի սպանեցին։

—Այո։

—Ինչու սպանեցին։

—Որովհետև աղբիւր անցկացրեց,—հեգնօրէն պատասխանեց նա։

Խաւարը փոքր առ փոքր թանձրանում էր, բայց մեր բաղդից երկինքը բոլորովին պարզ էր։ Արդէն հեռացել էինք քաղաքից մի քանի վերստ, երբ մի տեղ Սուլէյման խանը կառապանին բօթելով հրամայեց կանգ առնել։

—Տեսնո՞ւմ էք այս մեծ քարը,—դիմեց ինձ նա,—դա առաջ շատ մեծ էր, վերջերումս կոտրեցին, ոչնչացրին, Թամրիեանին սպանելուց յետոյ։ Զարագործը նրա քամակին էր եղել թաքնված և երբ հանգուցեալը իր ընկեր մի հայ ուսուցչի հետ միասին հասել էր այստեղ. Գնալիս էին եղել հէնց այն գիւղը, ուտեմ էք, ձորում երկու տեղ ճրագի լոյս է երևում... Երբ հասել էին այստեղ, նամարդը արձակել էր հրացանը, և խեղճ տղան փայլկենարար գլորվել էր ձիուց։ Գնդակը դիպել էր այստեղ և դուրս էր եկել այստեղ։

Ձեռքը դրեց իր ձախ կողքի և աջ ուսի վրայ։

Մի րոպէ լռելուց յետոյ աւելացրեց.

—Եթէ ես այստեղ լինէի, հիմի նա կենդանի կը լինէր։ Այդ միջոցին գիւղումն էի։ Հանգուցեալը անդադար գրում էր ինձ, որպէսզի գործերս թողնեմ ու գնամ Շուշի...

—Ուրեմն մօտիկ յարաբերութիւն ունէիք իրար հետ։

—Մեծ մտերմութիւն կար մեր մէջ։ Նա Բաքուից եկել էր հանգստանալու համար, բայց ես բացակայ էի... Գրում էր ինձ. «Եկ շուտով, Սուլէյման, սիրտս եմ տալիս քեզ։ Ի՞նչքան պէտք է դրամին ծառայողներից, եթէ հնարաւոր այդտեղից, երկու հարիւր րուբլի, ինձանից ստացիր այդ գումարը»... Օ՛, ինչ արդայ էր։

—Ծանօթ էի,—պատասխանեցի ես։

—Եթէ ես երկու օր շուտ հասնէի, անպայման ես էլ հետը կը լինէի այդ գիւղը գնալու միջոցին, և ես երաշխաւոր եմ, որ ջոջը չէր համարձակվի նրան սպանելու։

—Կողոպտելու նպատակով սպանեցին։

—Ոչ... Էհ, չարժէ խօսել... Ուրիշ հարցեր կային...

Մի քանի մանրամասնութիւններ հաղորդելուց և սպանվածի մասին ամենանպաստաւոր կարծիք յայտնելուց յետոյ, նկարագրեց նրա թաղման հանդէսը։

Խօսում էր գրաւիչ լեզուով։ Յիշեցնում էր արևելքի աշուղներին։

—Արցունքներս չէի կարողանում զսպել,—շարունակեց նա,—սիրտս պատառվում էր, տեսնելով նրան դագաղի մէջ առողջ, կայտառ գեղեցիկ... Նրա կինը, եթէ տեսնէք իրան...

—Ծանօթ եմ։

—Ջահել, գեղեցիկ... Յանկարծ դիմեց ինձ. «Լալ և արցունք թափիլ իմ բանն է, քո բանը չէ։ Քո բանը վրէժ լուծելն է»... Է՛, վերջապէս... Հասաւ վերջին րոպէն, դագաղը պէտք է դուրս բերէին տանից։ Կինը կարգադրեց այնպէս, որ բազմութիւնը դուրս ելաւ սենեակից, մնացինք երեք հոգի, եթէ ներելի է այսպէս ասել՝ ես, կինը և հանգուցեալը։ «Երդվիր,—դիմեց ինձ այրին,—այս դագաղի վրայ, որ վրէժը կը լուծես»։ Երդվեցի...

Ճանապարհից դուրս, աղօտ կերպով երևացին մարդկանց և անասունների սիլուէտներ, որոնք հանգիստ քայլերով ընթանում էին նեղ շաւղով։ Սուլէյման-խանը հրամայեց կառավարին կանգ առնել։

—Ի՞նչ մարդիկ էք,—խիստ ձայնով դիմեց նա ճանապարհորդներին։

Նրանք ինչ-որ գիւղի անուն տուեցին։

—Ուրեմն ինձ ճանաչում էք... Ասացէք, ով եմ ես։

—Սուլէյման-խան,—միաձայն պատասխանեցին նրանք։

Մեր կառքը շարժվեց տեղից։ Ճանապարհին շարունակեց խօսքը, մեծ հետաքրքրութիւն շարժելով իմ մէջ։ Ի միջի այլոց հաղորդեց նա, որ մեզ շրջապատող անծայր տարածութեամբ սարերն ու ձորերը, անտառներն ու հովիտները իր սեփականութիւն են կազմում։

—Ահա այնտեղ ձորի մէջ,—ի միջի այլոց, իմ ուշադրութիւնը դարձրեց նա,—գտնվում է հրաշալի հանքային ջուր։ Թուրքերէն անուանում են Թուրշ-սու, հայերէն՝ Թթու ջուր։

Վերջը խօսք բացվեց քաղաքական հարցերի մասին։ Ինձ թուաց, որ նրա հայեացքը առողջ է ուղղութիւնը մարդասիրական։

—Մենք իրար հետ հաշտ պէտք է լինենք,—աւարտեց նա իր խօսքը, երբ հասել էինք մի կայարան։—Այդ են պահանջում մեր ընդհանուր շահերը։

1904 Թւականի յուլիս ամիսն էր, ուրեմն ոչ նա, ոչ ես չէինք կարող գուշակել հայ-թուրքական այն վայրենի ու անմիտ ընդհարումը, որ շուտով տեղի պէտք է ունենար։

Կայարանում մի փոքր հանգստացանք և ընթրեցինք։ Սուլէյման խանը, իմանալով որ մտադիր եմ Տաթև գնալու, սկսեց նկարագրել թէ վանքը և թէ նրա շրջակայքը։

—Ո՞վ է այժմ այնտեղի վանահայրը,—հարցրի ես։

—Նիկոլայը,—լսվեց դրան հետևից մի յիմար ձայն։

Իսկոյն ներս մտաւ մի ջահել տղայ, համարեա պատանի, որ ըստ երևոյթին կայարանի ծառայողներից էր։

—Ներսէս վարդապետ,—պատասխանեց Սուլէյման-խանը,—ներողամիտ հայեացք գցելով պատանու վրայ։

—Ի՞նչ ես դուրս տալիս, տղայ,—դիմեց պատանուն Սաքուլը։

—Տաթևի վանահօր անունը Նիկոլայ է,—վստահ կերպով պատասխանեց նա։

Սաքուլը երկու ձեռքով խփեց նրա մեծ փափախին, որ դրել էր գլխին, և վազ տուեց սենեակից։

—Ղարաբաղցի ախմախ, հայ վարդապետի անունը Նիկոլա՞յ։

—Աստուած է վկայ Նիկոլայ է,—դրսից լսվեց ձայնը։

Նրան հետևեց հայհոյանքը Սաքուլի կողմից։ Մենք ականջներս սրեցինք։ Պատանին պատասխանեց այնպիսի մաղալու հայհոյանքով, որ ծիծաղելուց թուլացանք։ Վերջը լսվեց տուրուդմբոց, կրկին հայհոյանք, ճիչեր։

—Եղի չէ կռուվում լակոտը,—ներս մտնելով պատասխանեց Սաքուլը,—ասում է Նիկոլայ։

—

Հասանք Գորիս։ Սուլէյման խանը ցաւ յայտնեց, որ անկարող է ինձ հետ միասին Տաթև գնալ, բայց խորհուրդ տուեց մի քանի հետաքրքրական բաների վրայ առանձին ուշադրութիւն դարձնել։

—Առաջնորդարանը,—ասաց նա,—ունի փոքրիկ պատշգամբ. կանգնեցէք այնտեղ և դիտեցէք։ Դուք կը տեսնէք այնպիսի պանօրամա, որ կատարելապէս կը հիանաք։ Կը տեսնէք այնտեղից այնպիսի անդունդ, որ կը զարհուրէք։

Մնաս բարեւ ժամանակ յայտնեց ինձ, որ Թիֆլիս է գնալու, և խոստացաւ այցելել արհեստանոցս, այդ ճանապարհորդութեան արդիւնքը տեսնելու համար։

Նրա այդ ցանկութիւնը չը կատարվեց։ Ես իրան տեսայ առաջին և վերջին անգամ։

Ափսոս, լաւ մարդ էր։

Փ. Բաշինջաղեան

ՍԽՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՏԱՐԵԳՐՈՒԹԻՒՆԻՑ

(Նամակ խմբագրութեան)

—

Դէպքը տեղի է ունենում Պարսկաստանի խուլ անկիւններից մէկում՝ Համադանում։ Սարսափում էք, ընթերցող, որ Քրիստոսի առաքեալը, սիրոյ քարոզիչը Սաղոմոնի գերումն է գտնվում։ Այս երկտողով հանդէս եմ գալիս նկարագրելու թէ ինչպէս Խորէն անունով մի վարդապետ, իբրև նախանձախնդիր հայ աղջկայ բարոյականութեան, անառակօրէն արատաւորում է հայ աղջկայ պատիւը այնպիսի հրէշային դաղանութիւններով, որի վայրագ սխրագործութիւնների դիմաց նսեմանում է Սաղոմոնի գործած սխրագործութիւնը, և որին անձամբ դժբախտութիւն եմ ունեցել ականատես լինելու։ Դէպքը հին չէ, ուղիղ 5 ամիս է անցել այն օրից, երբ Համադանի յաջորդարանում յիշեալ վարդապետը իր Թուրք ծառայով, իր հայ դահճով ճիրանների տակ մահվան դուռն է հասցնում մի Թշուառ, անպաշտպան հայ աղջկայ, որը մեղադրվում է մի հայ երիտասարդի հետ ունեցած յարաբերութեան գործում։ Որպէսզի զրպարտութիւն չը համարվի ասածս՝ ես կը պատմեմ միայն իմ տեսածն ու զգացածը։ Մի օր պատահմամբ յաջորդարան եմ ուզում մտնել, երբ հակառակ սովորականին՝ բոլոր դռները փակված եմ տեսնում։ Ներսը, գզրոցի դահլիճում բացի խուժանապետ վարդապետից Թուրք ծառայից և Թշուառ զոհից՝ ոչ ոք չը կար. բակում պահապանութիւն անող վարժուհի օրիորդը իմ այն հարցին՝ թէ ինչու են փակ բոլոր դռները՝ ինձ պատասխանում է, որ «ներսը աղջիկ են թակում, մի քիչ սպասիր, ամեն ինչ կիմանաս»։ Եւ իմացայ...։ Մի քանի րոպէից յետոյ՝ տեսայ երկարահասակ, հաստաբեղ, հումկու մի տղամարդ, մի խուրձ ճիպոտ ձեռքին բռնած. Նա իսկոյն մօտենալով գզրոցի դահլիճին, ներսից փակեց դուռը, որի ձայնից դուռը բացվեց, ինքը ներս մտաւ և դուռը կրկին կողպվեց... Այստեղ գրիչը անզօր է նկարագրելու, սիրտը անզօր է զգալու այն սարսափելի դառն ու զորդառը, այն յուսահատ վայնասունը, որ արձակում էր Թշուառ զոհը՝ ճիպոտի ամեն մի հարուած իջնելիս։

Տեսել էք, ընթերցող, թէ գիւղացիները ինչպէս են բուրդ գզում.—ինչպէս ճիպոտներից մէկը բարձրանում, երկուս-երեքը իջնում. «մեռայ, մեռայ» աղաղակների մէջ հարուածների ճիչը այդ տեսակ ձայներ էին հասնում ականջիս։ Փայտի վրայ պառկեցրած և մերկացրած զոհի մարմինը բաժին-բաժին է արվում. ոտների կողմը յանձնվում է Թուրք ծառային, մէջքի կողմը ինքը վարդապետն է վերցնում, իսկ գլխի կողմը յանձնում է իր հայ դահճին, և սկսում են անխնայ ծեծել։ Հակառակ իմ ջանքերին՝ անկարող լինելով դուռը մի կերպ բաց անելով օգնութեան հասնել անտէր զոհին, չը կարողանալով տանել մինչև ժամանակ ներսից լսվող աղիողորմ ու սրտաճմլիկ աղաղակները՝ հեռացայ։ Թէ ինչ է անցել այնուհետև՝ չը գիտեմ։ Վերադարձին լսեցի, որ Թուրք ծառան հաշմանդամ դարձած Թշուառ զոհին բակի դռնից դուրս է առնում՝ այս խօսքերով. «Ուրացիր հաւատդ, մուսուլման դարձիր, ամուսնացիր հետս, որ ազատես ձեր խալիֆից, թէ չէ չես պրծնի»։

Միւս օր Թշուառ զոհը արդէն անկողնում էր. բոլորը ասում էին, որ նա կը մեռնի։

Ուսուցիչ՝ Ա. Տէր-Ներսէսեան

Օթէ, 1906 Թ. դեկտ. 1 ին

ԴԷՊԻ ԱՇԽԱՏԱՆՔ

—

«Մշակ»-ը իր № 265-ում կոչ է անում աշխատաւորներին դէպի աշխատանք։ Այո, դէպի աշխատանք, կրկնում ենք և մենք։

«Մշակը», Գր. Արծրունուց մինչև մեր օրերը կրկնել է աշխատանք և աշխատանք։ Աշխատաւորութիւնից գոյանում է այն քաղցր պտուղը, որը վայելում է մարդս իր խաղաղ յարկի տակ. բոլոր չարիքը առաջանում է սոված մարդուց։ Որպէսզի սովածին նպաստներով չանդամալուծենք, միջոց տուէք որ նա կարողանայ իր սեփական աշխատութեամբ ապահովել իրան։

Զրկված գիւղացին միջոց չունի իր հոգսերը ձեռք բերելու, իսկ դրսից էլ այնքան օգնութիւն չի ստանում որ բաւականութիւն տայ իր կարիքներին, և նա կրկին կը դիմէ նպաստի, իսկ այդ չը լինելու դէպքում, նա կը դիմէ այն միջոցին, որին դիմում է քաղցածը... Այդ դէպքում տուժողները կը լինեն մեր հարուստ ազգայինները։ Ես ձեզ եմ դիմում, հարուստ ազգայիններ, կարծեցէք ինչպէս կամենում էք, թէ շահի տեսակէտից թէ փառքի, դուք պարտաւորված պիտի մտնէք ժողովրդի դրութիւնը և օգնէք նրան։ Եւ այդ օգնութիւնը կը լինի բեղմնաւոր։ Ես օրինակ եմ վերցնում Ղազախ գաւառը իբրև ծանօթ տեղ. այդ գաւառը յայտնի է իր բնական հարստութեամբ—զանազան հանքերով. բայց էք հանքային արդիւնագործութիւնը այդ գաւառում, և զարմանեցին, որ հողի շատ պակասութիւն ունի, ուրախութեամբ կը գայ աշխատելու. Գիւղացին փորձելիս կը լինի իր հայրենիքում, հեռու քաղաքի վարակիչ մթնոլորտից, իր տանը իր ընտանիքի մէջ։ Այն վարձը, որը չի բաւականացնում բանւորին քաղաքում, կը բաւականացնէ նրա կէսը գիւղում. հետևապէս գործարանատէրը աւելի միջոց կունենայ արդիւնաբերութիւնը առաջ տանելու։ Բացվէք գիւղերում գործարաններ թէ հանքային թէ անտառային բերքերը արդիւնագործելու, և դա կը լինի ձեր կողմից ամենամեծ օգնութիւնը, որով ազատած կը լինէք մեր Թշուառ գիւղացուն կորստի անդունդից։ Մեր լրագիրները շարունակ գրում են ու գրում միայն լոկ խորհուրդ տալիս. իրաւացի է ասում «Մշակ»-ը (№ 266) թէ «յուշումները և հրահանգները այն ժամանակ են լինում գործնական, երբ իրանք մասնագէտները անձամբ այցելում են ժողովրդին և շօշափելի եղանակով ցոյց տալիս թէ ինչպէս պէտք է գործադրեն գիտութիւնը և կատարելագործութիւնները կեանքի մէջ»։

Հարուստներ, դուք ձեր միջոցով, իսկ դուք եռանդոտ երիտասարդ մասնագէտներ, ձեր ջանքերով միասին օգնեցէք մեր Թշուառ, գայթակղութեան մէջ ընկած գիւղացուն։

Ս. Պապեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Մշակի» հետևեալ համարը Աստուածածնի տօնի պատճառով լոյս կը տեսնէ երեքշաբթի դեկտեմբերի 12-ին։

—

Երէկ, դեկտեմբերի 8-ին, առաւօտեան 10 ժամին Կովկասի փոխարքայ Վորոնցով-Դաշկովը Բաթումից վերադարձաւ Թիֆլիս։

—

Կիրակի, դեկտեմբերի 10-ին առաւօտեան ժամը 11-ին Արտիստական ընկերութեան շէնքի մէջ կը կայանայ հայոց դրամատիկական ընկերութեան ընդհանուր արտակարգ ժողովը, որի դրամատիկների առարկաներն են, 1) հանգուցեալ դերասան Պետրոսեանի ընտանիքին ապահովելու խնդիր, 2) դրամատիկական ակումբի մասին զեկուցում, 3) հայկական թատրոնի պատմութիւն կազմելու խնդիր, 4) դերասան Թուրեանին մահարձան կանգնելու խնդիր, 5) Հայլաբարի թատրոնում ներկայացումները շարունակելու կամ վերջացնելու խնդիր, 6) դրամատիկական ընկերութեան ֆինանսական դրութեան հարցը։

—

Թիֆլիսի 3-րդ քաղաքամասի վաճառականները խնդիրք են ներկայացրել գեն.-նահանգապետին, որով նրանք խնդրում են, որ ի նկատի առնելով այն հանգամանքը, որ վաճառականները յաճախ սպառնալական նամակներ են ստանում, որով անյայտ անձեր իրանցից փող են պահանջում, նշանակել 2 գորոդովոյներ և նրանց զէնք պահելու և կրելու իրաւունք տալ։

—

Թիֆլիսի արական 2-րդ գիմնազիայի 8 րդ դասարանի աշակերտները հ. լեզուական խնդիրք են տուել ծնողական ժողովին, որով խնդրում են մաթեմատիկայի դասատու Անդրեևին, իբրև այդ պաշտօնին անարժան մարդու, արձակել պաշտօնից։

—

Ստացանք «վրացերէն քերականութիւն» գիրքը, Մ. Գ. Ջանաշվիլիի, 174 երես, գինն է 50 կոպէկ։

—

Դեկտեմբերի 8-ին, ցերեկվայ ժամը 11 ին, Միքայէլեան փողոցով Մեսխիի բանից Միքայէլեան հիւանդանոցը տարան պատգարակով, Նիկոլա Բրակին, զինւորներով շըրջապատված։

—

Դեկտեմբերի 7-ին, ցերեկվայ ժամը, 4 ին Թումանովսկայա փողոցում ձերբակալել են Թիֆլիսի վրաց ազնուականների գիմնազիայի 7-րդ դաս. աշակերտ, Ալէքսէյ Ախմետելովին և ուղարկել են կոմենդանտային վարչութիւնը։

—

Մեզ հաղորդում են, որ դեկտեմբերի 7-ին կէսօրից յետոյ Արմեանսկի փողոցով անցնող վաճառական Սահակեանցի գործակատարի վրայ, որ բանկ էր տանում 250 րուբլի, յարձակվում են մի քանի չարագործներ և ատրճանակը դէմ անելով, խլում են նրանից փողերը ու անյայտանում։

—

«Մշակի» № 206-ի վերջին տեղեկութիւններ բաժնում տպված էր մի լուր տէր-Գէորգ Մելիքեան քահանայի ընտանիքի մասին։ Գաւառական վարչութիւնը յատուկ քննութիւն է նշանակել եղելութիւնը պարզելու համար։ Այժմ մեզ հաղորդում են, թէ քննութիւնը ցոյց է տուել, որ այն եղելութիւնը հնարովի է։ Արձանագրելով այդ հանգամանքը, հետաքրքրական է իմանալ, ո՞վ է եղել լուր հնարողը, որ յանդգնել է այդ ձևով շօշափել մարդկանց պատիւը։ Թիֆլիսի նահանգապետի դիւանատունը նոյեմբերի 4-ին զեկուցել է այդ լուրի կեղծիքի մասին պաշտօնապէս։

—

«Մշակի» 269-րդ համարում հաղորդված էին օկոլօդօչնի Ալիմովի սպանութեան դէպքի մասին մի քանի սխալ տեղեկութիւններ, որը շտապում ենք ուղղել։ Անյայտ անձնաւորութեան արձակած գնդակներից սպանվել է միայն Ալիմովը, իսկ մնացածները, թէ վիրաւորները և թէ սպանվածները միասին են նոյն Ալիմովի պահապան ինգուշի գնդակներից։

—

Թիֆլիսի պօստ-հեռագրական վիճակի կառավարիչը յայտարարում է, որ սոյն դեկտեմբերի 3-ից պօստով 500 րուբլուց ոչ աւելի գումար տեղափոխելու վերաբերմամբ պահպանվում է պօստային ծախքի նախկին սիստեմը, վերցնելով իւրաքանչիւր 100 րուբլու առաջին 25 րուբլու համար 15 կոպ. իսկ մնացած 75 ի համար—10 կոպ.։ Իսկ հեռագրով մինչև 500 րուբլի տեղափոխելու նկատմամբ հեռագրի ծախք է վերցնվելու 20 խօսքի համար։ Մասնաւոր անձերի կամ կառավարական հաստատութիւնների դրամական ծրարների ընդունելութիւնը, բացառութեամբ ֆինանսների մինիստրութեան հաստատութիւնների, դադարեցնվում է։ Փողային ծրարների առաքումը Պեկինի, Տիանցզինի, Ուրգի և Կալգանի ռուսաց գրասենեակներին, պահպանվում է։

—

Թիֆլիսի գիշերային ապաստարանի կառավարիչը խնդրել է քաղաքային վարչութեանը մի փոքրիկ գումար յատկացնել քաղցած գիշերողներին կերակրելու համար, որով կը թեթևացնէ բազմաթիւ օրինաւոր մարդկանց վիճակը, որոնք միջոցներ չունեն։ Եթէ քաղաքը օգնելու միջոցներից զուրկ է, այդ դէպքում խնդրում է կոչ անել հասարակութեան։

—

Թիֆլիսի արական 4 րդ գիմնազիայի վերատեսչի խնդրանօք Թիֆլիսի ժամանակաւոր գեն.-նահանգապետը թոյլատրել է «Новая драма» ընկերութեանը կիրակի, դեկտեմբերի 10-ին մի ցերեկվայ ներկայացում տալ յիշեալ գիմնազիայի չքաւոր աշակերտների օգտին։

—

Թիֆլիսի իգական 2 րդ գիմնազիային կից ծնողական ժողովի խորհուրդը մանկավարժների, ծնողների և աշակերտների միջև մօտիկ յարաբերութիւններ հաստատելու նպատակով, որոշել է կազմել գրական ցերեկոյթներ և երեկոյթներ, կրթական խաղեր և այլն, որի համար ընտրվել է առանձին մասնաժողով՝ 3 անդամ մանկավարժներից և 3 անդամ էլ ծնողներից։ Ցեառյ ցանկութիւն է յայտնված մշակել աշակերտական գրադարանը, իւրաքանչիւր դասարանի համար առանձին ընտրելով այնպիսի գրքեր, որոնց բովանդակութիւնը համապատասխան է նրանց տարիքին։ Որոշված է առ այժմս հիմնել գրադարան I դասարանին կից և այդ գրադարանը գրքերով լրացնելու համար խորհուրդը իր սուղ միջոցներից յատկացրել է 40 րուբլի։

—

Ռուսական գործակալութեան հեռագիրը հաստատում է տաղջից հաղորդած այն լուրը, որ Բաթումի նախկին նահանգապետ Սոսնովսկու և փոխ-նահանգապետ Կրուշէճի գործի քննութիւնը վաղված է դադարեցնել, որովհետև, քննութեան ժամանակ յիշեալ անձերի յանցանքների ցուցակը չէ գտնված։

—

Մօտ օրերս Բութմայիսի գաւառի Պլատէկուրի գիւղում անյայտ անձինք մտնելով գիւղացի Իէսէն Համբրաձէի տունը, նրա բացակայութեան ժամանակ, և ծեծելով կնոջը—Ելիզավետային, գողացել են 500 րուբլի և անյայտացել են։

—

Թէլաւի գաւառից հաղորդում են, որ Թէլաւ քաղաքում հարազատ եղբայրներ Դարչօ և Ալէքսանդր Փարասադանովների մէջ վէճ է ծագել, որի ժամանակ նրանցից առաջինը կացինի հարուածով տեղնուտեղը սպանել է եղբօրը։

—

Դեկտեմբերի 3-ին, Բաքւում, երեկոյեան մօտաւորապէս ժամի 7-ին 2-րդ խապեօրների գնդի 6-րդ հարիւրակի հրամանատար պօդեսաուլ Բէլօմեստնովը սուրհանդակ, կօզակ Ստեփան Շիվինովի ուղեկցութեամբ, Բաիլօվում վերադառնում է եղել իր տունը։ Բիստրեցկու տան մօտ նրանք հանդիպում են 5 կամ 6 հոգուց բաղկացած մի խումբ մարդկանց։ Ութ քայլ հազիւ էին նրանք անցել, երբ կանգնած խմբից մէկը գնդակ արձակեց և սպանեց ուղեկցող կօզակին։ Բէլօմեստնովը շուռ եկաւ գնդակի ձայնից և տեսաւ ընկած իրան ուղեկցող սուրհանդակին։ Պաշտպանվելու նպատակով նա իսկոյն վերցնում է կօզակի հրացանը, բայց խումբը սկսում է փախչել։ Սպանվածի մօտ կանգնեցնելով օգնութեան եկած կասպիական նաւաստիներից երկուսին, նա գնում է Բիբի-էյբաթ հարիւրակի զօրանոցը և եղելութեան մասին հաղորդում կօզակներին։ Երբ վերադառնում է, հրամանատարը իր կօզակներով, սպանութեան ականատեսները վկայում են, որ սպանողը եղել է Բիբի Էյբաթի տնատէր Բէլուխինի որդի Դիմիտրին, որը մօտ օրերս միայն արձակվել էր Բագւի բանտից և մեղադրվում է Բաիլօվում օգոստոսի անցքերի ժամանակ Նազարովի տունը հրդեհելու և մի հայի սպանելու համար։ Կօզակները այդ լսելուն պէս, իսկոյն գնում են շրջապատում Բէլուխինի տունը, դուրս հանում նրան փողոց և տեղն ու տեղը սպանում հրացանի սուիններով։ Այդ սպանութեամբ չը բաւականանալով՝ կօզակները ուզեցել են հրդեհել և նրա տունը, բայց հրաժարվել են այդ մտքից և միայն ջարդ ու փշուր են արել տան թալանել թէ նրա տունը և թէ տան մէջ եղած նպարեղէնների խանութը և ճաշարանը։ Հաղորդելով այդ մասին, «Касп.» լրագիրը աւելացնում է, որ աւերված է նոյնպէս հարևան խանութը, ուր Բէլուխինը թաքցրել էր իր ատրճանակը։ Սպանութեան յաջորդ օրը կօզակները հանդիպել են Բէլուխինի ընկեր Կօրօտկօվին, որը նոյնպէս յայտնի խուլիգան է, և լաւ ջարդել են նրան, իսկ գիշերը թալանել են Բաիլօվում այն խանութը, որի առաջ սպանվել է կօզակը։ Դեկտեմբերի 5-ին կատարվել է կօզակի թաղումը։

—

Դեկտեմբերի 4-ին Բաքւում, երեկոյեան ժամի 9-ին, 8 զինված Թուրքեր մտնում են Շակօվի պարտէզը, կալանաւորում են պարտիզպանին և այնտեղ եղող մի քանի կողմնակի անձանց ու սկսում են տպագրել Թուրքերէն լեզուով Թռուցիկներ։ Թռուցիկ շարուածքը նրանք բերել էին իրանց հետ։ Տպագրելով 3 հազար օրինակ, նրանք դուրս են գալիս ու անյայտանում։

—

Դեկտեմբերի 3-ին «Каспій» լրագրի ասելով Բաքւում տ. Կ. Խ. Մուխտարովայի տանը կայացել է Բագւի մուսուլմանուհիների երկրորդ ընդհանուր ժողովը Թուրք կանանց ընկերութիւն հիմնելու բարեգործական ու կրթական նպատակներով։ Ժողովին մասնակցել 50 հոգուց աւելի մուսուլմանուհիները, յանձնաժողովներ ընտրելով ընկերութեան կանոնադրութեան մշակումը իր միջից ընտրված յատուկ մասնաժողովին, հաւաքել են այդ օրը 615 ր., յօգուտ սովեալների և աղքատների օգնութեան կարօտ մուսուլմանների։

—

Բագւում լոյս է տեսնելու շուտով մի նոր շաբաթաթերթ, Թուրքերէն լեզուով, որը պէտք է պաշտպանէ Թուրք բանւորների շահերը։ Վերջապէս ունենալու է և Թուրք պրոլետարիատը իր սեփական օրգանը։

—

Վերջերումս զինւորական դատարանը նիստ գումարելով Բագւում, քննեց հինգ զինւորների գործը, որոնք մեղադրվում են հակակառավարական գործողութիւնների համար։ Դատարանը 5 զինւորներին էլ դատապարտեց զմահ աքսորի։ Նոյն դատարանը դատապարտեց և մի կօզակի 12 տարվայ բանտարկութեան, մի այլ կօզակի 7 տարվայ աքսորի՝ իր գնդից փախած լինելու համար։

—

Բագուի վիճակագրական տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ Բագւում ապրում են 138,611 հոգի, որոնցից 9102-ը պարապվում են առևտրով, 144-ը՝ կալուածատէրներ են, 3,992-ը զանազան արհեստներով են զբաղված, 976-ը թեթև բեռներ կրողներ, կառապաններ, 1,902-ը ծանր բեռներ կրող, սայլապաններ, իսկ 28,037-ը բանւորներ։

—

Նոյեմբերի 26 ին Բագւում, մեծ ծովային փողոցում բանտարկեալ Մելիք Եղիազարեանին ուղեկցող ոստիկան Լաւրէնտիա Մաշչէնկօի վրայ յարձակվում է մի անյայտ հայ և մի քանի անգամ ատրճանակ կրակում է նրա վրայ։ Այդ ժամէնաից օգտվում է բանտարկեալը, փախչում է գիժում։ Քննութիւնը պարզում է, որ ինչպէս այդ յանցագործութիւնը, այնպէս և ոստիկան Բարբասովի առաջ վիրաւորվելը կատարվել է պարսկահպատակ Գրիգոր Աւետիսեան Յակոբեանի ձեռքով, որը շուտով ձերբակալվում է և բանտարկվում։ Նա կը յանձնվի պատերազմա-դաշտային դատարանին։

—

Անցեալ նոյեմբերի 26-ին Բագու տանող Բալախանու խճուղու վրայ մահվան սպառնալիքով կողոպտվում է կառապան Խասանեան Սաիֆուլովը։ Զարագործները բռնված են, և հետևեալներն են. Թէլաւի բնակիչներ Անդրէյ Կապուստին և Թէօդոր Գուսէկով։ Ընդ սմին պարզվել է, որ կառապաններին կողոպտելով պարապել են նաև Շամախի բնակիչներ Իվան Գուսակովը, Ստեփան Պաւլովը, Վասիլիյ Կապուստինը և Իվան Պաւլովը։ Առաջին երկուսի վերաբերմամբ մինչորդութիւն է յարուցած՝ յանձնել պատերազմա-դաշտային դատարանին, իսկ մնացած չորսը ներկայումս բանտարկված են 3 ամիս ժամանակով այն պայմանով, որ այս ժամանակամիջոցը լրանալուց յետոյ—նրանք աքսորվեն իրանց հայրենիքը, որպէս հասարակական ապահովութեան վտանգաւոր անձնաւորութիւններ։

—

Ախալցխայի գաւառի Ախուրեան գիւղում, նոյեմբերի 27-ին, երեկոյեան մօտ ժամը 7 ին, ատրճանակի հարուածով մէջքից ծանր վիրաւորված է անյայտ չարագործի ձեռքով նոյն գիւղի բնակիչ Ահմեդ-բէգով Դուրսուն օգլին։

—

Նոյեմբերի վերջերին, Եկատերինօդարում, Կրասնի կոչվող փողոցում, Գուրենկովի և Վոլօշէնկօի խանութից, անյայտ չարագործները, դռները կոտրելով, գողացել են մօտ 100 ատրճանակ—մօտաւորապէս 2000 րուբլու արժողութեամբ։ Քննութիւն է կատարվում։

—

«Вѣкъ» լրագիրը հաղորդում է, որ Գուրկօ-Լիդվալեան գործի համար մասնաժողովը նշանակվել է, ոչ թէ պրեմիէրի ցանկութեամբ, այլ Գուրկօի համախոհների բարեխօսութեամբ։ Բիւրօկրատական շրջաններում ասում են, որ այդ հանգամանքը բաւականին փոխում է իրերի դրութիւնը։ Ներկայումս սկսում է պարզվել, որ գործը նպաստաւոր է դառնում Գուրկօի համար, որ գիտէին այդ և նրա համախոհները։ Այդ ելքը արդէն Ստոլիպինի պարտութեան նշանն է երևում։

—

Գերմանիայի սօցիալ-դեմօկրատական բանւորական կուսակցութեան կենտրօնական կոմիտեն դիմել է բոլոր կուսակցութիւններին հրաւէր կարդալով անմիջապէս հանգանակութիւն կազմակերպել օգնելու ռուսաց ընկերներին իրանց ընտրողական պայքարում։

(«Вѣкъ»)

—

Խարկօվ-Նիկոլայեւեան երկաթ. պաշտօնեաների շրջանակային համագումարը միաձայն որոշել է, որպէսզի համառուսական երկաթուղային դաշնակցութեան քաղաքական-պրօֆեսիօնալ պլատֆորմը պահպանվի։ Նոյնպէս որոշումն է ընդունել ձայների մեծամասնութեամբ Կուրսկ-Խարկով-Սեվաստոպոլեան երկաթուղու պաշտօնեաների համագումարը։

(«Вѣкъ»)

—

94 րդ Ենիսէյսկի գնդի օֆիցերներին և չինովնիկներին միանուագ վարձատրութիւն է տրված 19,467 րուբլի անկարգութիւնների ժամանակ քաղաքացիական իշխանութիւններին աջակցութիւն ցոյց տալու համար։

(«Вѣкъ»)

Դեկտեմբերի 1-ին ժողովրդական ազատութեան կուսակցութեան Պետերբուրգի քաղաքային կոմիտեի գործադիր մասնաժողովի նիստում որոշում է կայացել առաջարկել քաղաքային կոմիտեին անմիջապէս պատրաստել կուսակցութեան ընտրողների ցուցակները։ Նիստին ներկայ եղող հրէական իրաւական հաւասարութեան դաշնակցութեան ներկայացուցիչների հետ համաձայնութիւն է կայացված միասին ընտրողական պայքար մղելու համար։ Էսաօնների խմբակը ևս ամբողջապէս միացել է ժողովրդական ազատութեան կուսակցութեանը։

—

Ոստիկանական դեպարտամենտը տեղեկութիւն է ստացել, որ ռուս ժողովրդի դաշնակցութեան Կիշինեւի բաժանմունքը դժգոհ լինելով տեղական նահանգական դատարանի պրոկուրորի գործողութիւններից, մահվան պատիժ է նշանակել նրան։ («Р. В.»)

—

Ներքին գործերի մինիստրութիւնը խնդիրքներ է ստանում Լիֆլանդիական նահանգների կալուածատէրերից, որոնք խնդրում են ընտրութիւնների ժամանակ զօրք ուղարկել Լիֆլանդիա, որովհետև տեղական գիւղացիները թշնամաբար են տրամադրված դէպի կալուածատէրերը։ («Р. В.»)

—

«Humanité»-ն հաղորդում է, որ Պարիզում տեղեկութիւն է ստացել սօց.-յեղափոխական կուսակցութիւնից, որ Գր. Գերշունի և Կլաբերը, (հայր և որդին) որոնք փախել էին Ակատուի քաղաքի բանտից, բոլորովին անվտանգ են։

—

«Русь» լրագիրը լսել է, որ վերջին ժամանակներս Պետերբուրգում բոլոր պրոգրեսիվ ընտրողները, որոնք կադեներից ձախ են, միանալով կազմում են հողի ու անկախութեան դաշնակցութիւն։ Այդ դաշնակցութեան մէջ մտել են մի ամբողջ շարք յայտնի գործիչներ ու գրականագէտներ։ Կարծում են, որ այդ կազմակերպութեանը կը յարեն ընտրութիւնների ժամանակ մի շարք պրօֆեսիօնալ դաշնակցութիւններ ևս։

—

Դեկտեմբերի 1-ին «Տովարիշչ» ասելով բիւրօկրատական շրջաններում լուր է տարածվել, որ Ստոլիպինին առաջարկել են անյապաղ զեկուցում ներկայացնել ընտրութիւնների վերաբերեալ ձեռք առնված նախապատրաստական աշխատանքների մասին, նոյնպէս և Պետական Դումայի ու Խորհրդի առթիւ մինիստրների խորհրդի ունեցած հայեացքների մասին, որովհետև անհրաժեշտ է համարվում իսկոյն և եթ որոշել կառավարութեան գործունէութեան եղանակը։ Բարձր շրջանների յարուցած հարցերը քննութեան են ենթարկվելու մինիստրների խորհրդի արտակարգ նիստում մօտ օրերս։ Ինչպէս ասում են, կաբինետի զեկուցումը կը քննվի բարձր շրջանների յատուկ խորհրդի մէջ, ի միջի այլոց, այդ զեկուցման մասին կը հարցնեն նախկին մինիստրներից մի քանիսի կարծիքները ևս, որոնց թւում կոմս Վիտտէին, Դուրնովօին և Գօրեմիկինին։ Ցամենայն դէպս առաջիկայ շաբաթ սպասում են, որ ընտրութիւնների և կառավարութեան մերձաւոր նպատակների համար կառավարչական հաղորդագրութիւն կը լինի։

—

Սարատովի և Օրլովի նահանգների քահանաներից շատերը խնդրամատոյց են լինում հոգևոր կառավարութեանը փոխադրելու իրանց ուրիշ նահանգներ, որովհետև ազգաբնակութիւնը չէ վարձատրում իրանց և նրանք դատապարտված են չքաւորութեան։ («Р. В.»)

—

Բանւորական պատգամաւորական խորհրդի գործի համար դատապարտվածների պատիժը՝ մօտաւոր են փոխել աքսորը 4 տարվայ բանտարկութեամբ։ Կալանաւորները իմանալով այդ մասին բողոք են ներկայացրել արդարադատութեան մինիստրին այդ կարգադրութեան դէմ, յայտնելով, որ բոլոր ոյժով նրանք կը պահանջեն այն պատիժը, որին դատապարտված են։ («Переломъ»)

—

Նոյեմբերի 22-ի գիշերը կալանաւորված է Վիբորգի եկեղեցու քահանայ Պաւելը, որ մեղադրվում է քրիստոնէական սօցիալիզմի օգտին համաձայն քարոզ խօսելու համար։

(«Товарищъ»)

—

«Вѣкъ» լրագրի ասելով Կրօնշտադից տեղեկութիւն է ստացվել, որ ներկայումս Կրօնշտադի բանտերում և ոստիկանամասերում պահվում են 1500 հոգուց աւելի քաղաքական կալանաւորներ, որոնք կալանաւորված են քաղաքի մէջ զինւորական և պաշարողական դրութիւն մտցնելու օրից։

—

Ֆինանսական մինիստրութիւնը տեղեկութիւն է ստացել, որ Գիւղացիական բանկի զանազան բաժանմունքներում խնդիրքներ են ստացվել գիւղացիներից, որոնք յայտնում են, որ ցանկանում են իրանց հողաբաժինները գրաւ դնել և օժանդակութիւն ստանալ։ Այդ երևոյթը մասնաւոր նկատվում է նահանգներում, որտեղ սովը նեղում է գիւղացիներին։

(«Вѣкъ»)

—

Նոյեմբերի 26-ին գիշերը կոմս Վիտտէն արտակարգ կերպով կանչված է եղել Ցարսկոյէ Սելօ, ուր նա մնալով մի քանի ժամ, վերադարձել է։ «Вѣкъ» լրագիրը հաղորդելով այդ մասին աւելացնում է, որ կոմսը կանչված է եղել նոյեմբերի 27-ին ևս ցերեկվայ ժամի 2-ին և վերադարձել է միայն երեկոյեան։ Ստոլիպինի հրաժարականը կասկածից դուրս է։ Վիտտէն մի քանի մեծ ազդեցութիւն ունեցող անձանց կողմից ջերմ պաշտպանութիւն է գտնում։

—

ԲԱԹՈՒՄԻՑ, մեզ գրում են, «Այսօր օրհնվում է Բաթումի նորակառոյց ռուս մայր եկեղեցին։ Այս առիթով եկած են Կովկասի փոխարքան՝ կոմս Վորոնցով-Դաշկով, իր ամուսինը և Վրաստանի էկզարխը։ Ընդունելութիւնը պաշտօնական էր։ Կոմսը իր ընտանիքով մնացած է հէնց վագոնների մէջ։ Փոխարքան յատուկ պատիւ արեց հայ լուսաւորչական եկեղեցուն իր այցելութեամբ։ Եկեղեցու դուռը դիմաւորեցին կոմսին երեցփոխը աղ ու հացով, որ և խօսեց հայ հասարակութեան անունից։ Ապա հոգևորականութիւնը շուրջառներով, խաչ ու խաչվառներով ու շարականով ներս տարաւ եկեղեցի։ Կաթոլիկ հոգևորականութիւնը ևս սպասում էր, բայց չը գնաց այնտեղ, այլ գնաց մահմեդական մզկիթը։ Ափսոս, մեր եկեղեցում հասարակութիւն չը կար. պատճառը կրկին էր. մին, որ երկու ժամ առաջ միայն իմաց էին տուել թէ կոմսը գալու է հայոց եկեղեցին, միւս էլ որ զինւորներով բռնված էին ճանապարհները։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

—

Ենա, նոյեմբերի 20-ին

Գերմանական քաղաքական կուսակցութիւնների կեանքում ներկայումս տեղի ունեցած ամենաաչքի ընկնող դէպքերից մէկն է ձախակողմեան լիբերալ պարտիաների իրարու հետ

համաձայնութեան գալը քաղաքական որոշ հարցերի և ընտրողական պայքարի ժամանակ իրար զիջումներ անելու վերաբերմամբ։ Լիբերալ պատգամաւորների նիստերը տեղի ունեցան Ֆրանկֆուրտում, ուր ժողովվել էին հետևեալ երեք կուսակցութիւնների ներկայացուցիչները. ազատամիտ ժողովրդական պարտիա, գերմանական ժողովրդական պարտիա և ազատամիտների միութիւն. այս վերջինիս ներկայացուցիչներից էին աչքի ընկնող քաղաքական գործիչներ՝ Նաուման և Բարտ։

Այս երևոյթը ունի իր հիմնաւոր շարժառիթները, ուստի վաղ թէ ուշ այս միացումը իրականանալու էր. նախ որ՝ սօցիալ-դեմօկրատիան բաւականին զօրեղացել է Գերմանիայում, որն բայխստագում 79 ձայն ունի, ուրեմն թւի կողմից ամենաձախ այս կուսակցութիւնը երկրորդ տեղն է բռնում. լիբերալների տեսակէտով այս երևոյթը, ի հարկէ, ցանկալի բան չէ և իրանց աշխարհահայեացքից բղխում է այդ ուժեղացման դէմ կռուելու անհրաժեշտութիւնը, իսկ սօցիալ-դեմօկրատիայի դէմ կռուելն անկարելի էր այն հանգամանքների մէջ, որի մէջ գտնվում էին պառակտված լիբերալ պարտիաները և ժողովրդի համակրութիւնը ոչ մի կերպ իրանց կողմը գրաւել չէին կարող, քանի որ վերջին տասնամեակում փայլում էին իրանց անգոյն գործունէութեամբ։

Լիբերալների միութիւնը անհրաժեշտութիւն էր դարձել մի այլ տեսակէտից. եթէ լիբերալները ուզում են կանգնած մնալ իրանց քաղաքական աշխարհահայեացքի վրա և հետևողական լինել, պարտաւոր են աւելի սուր և ուժեղ պայքար մղել պահպանողական, ռէակցիօներ տարրերի դէմ, որոնք միանալով բայխստագում ամենաուժեղ և տոն տուող թիւն են կազմում և իրանց յետադիմական առաջարկները անց կացնելով թունաւորում են ժողովրդի կեանքը։ Ուրեմն լիբերալիզմը աւելի կրքոտ կռիւ բայխստագի աջ թևի դէմ պէտք է մղէ և ոչ ձախի, մնալով միշտ կուսակցութիւնների կենտրօնական տեղում։ Այս բաւականին աչքի ընկնող դիրքը չէր կարող գերմանական լիբերալիզմը բռնել, քանի որ նա մինչև օրս պառակտված էր և յայտնի իր անգոյնութեամբ։ Պառակտված ճիւղերը միութեան կամ համաձայնութեան բերելու խնդիրը դժուար չէր գլուխ բերելը, քանի որ գիտական, տեսական աշխարհահայեացքի չնչին տարբերութիւններ կան այդ ֆրակցիաների մէջ և այդ բաժանումները աւելի հիմնված են անձնական, քան թէ գաղափարական շարժառիթների վրա, ինչպէս նկատում են շատերը։

Որ լիբերալ թևերի համաձայնութեան գալը ճակատագրական անհրաժեշտութիւն էր, ցոյց կը տան հետևեալ թւերը. ներկայ բայխստագի անդամները հետևեալ կուսակցութիւններին են պատկանում.

1) Կենտրօնում—99 յետադիմական։
2) Պահպանողական—52։
3) Սօցիալ-դեմօկրատ—79։
4) Նացօնալ-լիբերալ—51. բռնում պահնող. և լիբերալների մէջտեղը. աւելի աջ է։

Ազատամիտ տարրեր

5) Ազատամիտ ժողովրդական պարտիա—20։
6) Ազատամիտների միութիւն—10։
7) Գերման. ժողովրդական պարտիա—6։
8) Այլ և այլ, մանր-մունր կուսակցութիւններ, որոնք աւելի աջ են։

Ընդամենը—397

Ինչպէս տեսնում էք, լիբերալները մի չնչին տոկոսն են կազմում բայխստագում։ Այս ընկած դրութիւնից բարձրանալ, քաղաքական կեանքի ղեկը մասամբ իրանց ձեռն առնել են ուզում ազատամիտ տարրերը. կաջողվի՞, թէ ոչ, այդ ապագայի գործ է։

Աւելորդ չէր լինի համառօտակի տալ լիբերալների կարծիքները մի քանի հարցերի վերաբերմամբ։ Լիբերալները դէմ են անհատական սեփականութեան վրա հիմնված ներկայ պետութիւնների էական փոփոխութեանը հասարակական հիմքերի վրա. նրանք աւելի կողմնակից են րեֆորմատօրական գործունէութեան. Ներկայ լիբերալիզմը չէ ընդունում հին լիբերալիզմի պէս, թէ երկրի մէջ պէտք է իշխէ կօնկուրենցի անսահման ազատութիւն, որը իբր թէ անհատական ազատութեան հիմքն է և որ պետութեան գոյութեան միակ նպատակն է երկիրը պաշտպանել արտաքին թշնամիներից և տեական դարձնէ երկրի մէջ անհրաժեշտ խաղաղութիւնը. Ներկայ լիբերալիզմը դէմ է այս հայեացքին, նրա համար պետութիւնը ոչ թէ միայն պօլիցիական դեր ունի, այլ նա մի բարոյական մարմին է, որը պէտք է ձգտէ բարոյական նորմաները իրականացնելու կեանքի մէջ. նա պէտք է մի դասակարգի գործ դրած ճնշումները միւս դասակարգի վրա անկարելի դարձնէ, նրա մէջ ամեն մի քաղաքացու համար բախտաւոր կեանքը կարելի պէտք է դառնայ. պետութիւնը չը պէտք է դառնայ կապիտալիստների գործիքը, նրա կամակատար ծառան, այլ պէտք է հիմնական միջոցներ ձեռք առնէ, որ չորրորդ՝ բանւոր դասակարգի տնտեսական դրութիւնը բարձրանայ, նա էլ միջոց ունենայ մարդավայել կեանք ունենալով՝ ճաշակելու գիտութեան և գեղարուեստների պտուղը։ Պէտք է իշխէ կազմակերպման և ընկերակցութիւնների կատարեալ ազատութիւն։ Որպէսզի ժողովրդի բոլոր խաւերը կարողանան իրանց իղձերի թարգմանները ունենալ բայխստագում, ուստի անհրաժեշտ է ընդհանուր, ուղղակի հաւասար ձայնատուութեան իրաւունք, որի մասին պրօֆ. Բայնը ասում է. «Լիբերալիզմը իշխողներին և իշխվողներին իրարու հակադիր դնելուց, որը կօնսերվատիվների համար մի կարևորութիւն է, ազատված է և այն կարծիքին է, որ ժողովրդի ամեն մի անդամ պարտաւոր է ըստ իր ուժերի և ընդունակութիւնների դէպի վեր ելնելը աշխատէ, որպէսզի իր ժողովրդին ինքնուրոյն կերպով ծառայէ և իր մասն ունենայ իշխանութեան վրա. իսկ սրան հասնել կարելի է ընդհանուր, հաւասար, ուղղակի ձայնատուութեամբ»։

Լիբերալների կանօնաւոր կազմակերպման ձգտումը և համաձայնութեան գալը մի դրական երևոյթ է գերմանական կեանքում, մի բան, որը խոստովանվում է և ռէվիզիօնիստների օրգանը։

Գ. Էդ.

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

7 դեկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 դեկտեմբերի, Սիմբիրսկում դեկտեմբերի 12-ին գումարվելու է հոկտեմբերեանների բաժնի նիստը, որին հրաւիրված է Մօսկվայի պրիվատ-դօցենտ Բէլկինը։ Բաժնի կօմիտէտը անբերրիութիւնից ճնշված գիւղացիների օգտին հանգանակութիւն է բացել։ Հոկտեմբերականները դիմել են Ա. Ի. Գուչկօվին, խնդրելով աջակցել հոկտեմբերի 17-ի դաշնակցութեան սովատանջ անդամների համար ճաշարաններ բանալու գործին։ Մինսկում հոկտեմբերականները եռանդուն ագիտացիա են մղում։ Տեղի են ունենում մասնաւոր ժողովներ, կազմվել են գաւառական նախընտրական կօմիտէներ։ Բաժիններ են բացվում Գրօդնայում, Մօսկվայի նահանգի բոլոր գաւառական քաղաքներում. դեկտեմբերի 10-ին կայանալու են հոկտեմբերեականների ժողովները։—Սամարկանդում ծնած «ռուսաց ծայրագաւառ» կուսակցութիւնը միացել է հոկտեմբերականներին և ունի իր սեփական լրագիրը։ «Ռուս մարդկանց դաշնակցութեան» խնդրագրեր են ներկայացրել՝ ճիւղեր բանալ Վէրխնէդնէպրօվսկում, Սակսագում, Գօրլօվկայում, Բախմուտում և Լուգանսկում։ Պետական Դումայի թեկնածու է համարվում Սերգէյ Կօվալէվսկին։

ՄՕՍԿՎԱ, 7 դեկտեմբերի։ Մեծ թատրօնում «Жизнь за Царя» օպէրայի ներկայացման ժամանակ մեծադղորդ մի ցոյց տեղի ունեցաւ։ Անհաշիւ կերպով ազգային օրհներգը կրկնվեց. օթեակները լի էին ժապաւէններով և դրօշակներով։

ՖՐԱՆԿՖՈՒՐՏ ՄԱՅՆԻ ՎՐԱ, 7 դեկտեմբերի։ «Ֆրանկֆ. Ցայտունգին» հեռագրում են Տեանցզինից, որ այնտեղ դրութիւնը լուրջ է համարվում։ Շատ տեղերում երևան են հանվում ռազմամթերքների պահեստատեղեր. մասնաւոր անձինք եռանդով զէնքեր են գնում։ Այս գործում մեծ դեր են խաղում օֆիսում վաճառող չինացիները և զանազան մութ անձնաւորութիւններ։ Ճապօնացիները Պեկինի միսիայից 100 հրացան են տուել 50 արկղ փամփուշտներով։

8 դեկտեմբերի

ՍՕՖԻԱ, 7 դեկտեմբերի։ Նորին կայսերական մեծութեան անուանակոչութեան առիթով եկեղեցում, Ֆերդինանդ իշխանի ներկայացուցչի, դիպլօմատների և բարձր իշխանութիւնների ներկայութեամբ կայացաւ հանդիսաւոր պատարագ։ Ապա տեղի ունեցաւ դիպլօմատիական գործակալների ընդունելութիւնը։

ՄՕՍԿՎԱ, 7 դեկտեմբերի։ Համալսարանում կախված է ռէկտօրի և խորհրդի մասնաժողովի յայտարարութիւնը, որի մէջ առաջ է բերված քաղաքապետի վերաբերմունքը ազդարարութեամբ, որ իրաւաբանական ֆակուլտէտի շինութեան մէջ տեղի են ունենում յեղափոխականների ժողովները մասնակցութեամբ կողմնակի անձանց, որոնցից կազմվում են մաքսիմալիստների, սօցիալ-յեղափոխականների, ռուսական սօցիալ-դեմօկրատական կուսակցութեան և ուսանողների տէրրօրիստ խմբի, այսպէս կոչված «որսորդների խմբակ»-ի Մօսկվայի ճիւղերը։ Քաղաքապետը, դրդված հասարակական ապահովութեան հոգսից, նախազգուշացնում է, որ եթէ համալսարանական իշխանութիւնը վերջ կը դնէ այդ օրինազանցութիւններին, այն ժամանակ նա իրան հարկադրված կը զգայ, ի վերականգնումն օրինական կարգ ու կանօնի, համալսարան մտցնել ոստիկանութիւն։ Ընդունելով առաջ բերած փաստերը միանգամայն անթոյլատրելի համալսարանում, ռէկտօրը և խորհրդի մասնաժողովը իրանց պարտքն են համարում ուսանողներին մատնանշել այն սպառնացող վտանգը, որպիսին սպառնում է համալսարանին այսօրինակ պայմանում։

ԳՎԱՅԻԱԿԻԼ, (Հարաւային Ամերիկա)։ Լօնդոնից հաղորդում են, որ այնտեղ ապստամբվել է տեղական զօրաբանակը ռոճիկ չստանալու պատճառով։ Սպանված են երեք օֆիցերներ։ Ապստամբները շրջել են փողոցներով և կրակել ու կողոպտել են տները և խանութները։ 25 բնակիչ սպանված են, շատերը վիրաւորված։ Գնդապետ Պաէզը մեկնել է կարգը վերահաստատելու համար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 դեկտեմբերի. Դեկտեմբերի 1 և 5-ի նիստում մինիստրների խորհուրդը քննել և ընդունել է հետևեալ առաջարկութիւնները. 1) ճանապարհների հաղորդակցութեան մինիստրի՝ առանձին տոմսերով թոյլատրելու, բացի մեկնող ճանապարհորդներից և կողմնակի հասարակութեան դուրս ելնել դահլիճից երկաթուղային կանգնատեղին (плотформа)։ Մինիստրների խորհուրդը որոշել է վերոյիշեալ տոմսակների գների որոշման հարցը թողնել ճանապարհների հաղորդակցութեան մինիստրին, որը կարող է այդ առիթով համաձայնութեան մէջ մտնել ֆինանսների մինիստրի հետ։ 2) Ներքին գործերի մինիստրի, ներկայացնելու ի բարձրագոյն հաստատութիւն կազմած որոշումը՝ իրաւունք տալ տեղական իշխանութիւններին, նահանգապետներին, շրջանապետներին, քաղաքապետներին և գեներալ-նահանգապետներին իրանց ենթակայ տեղերում թոյլատրել վիճակախաղեր յօգուտ բարեգործական հիմնարկութիւնների։ 3) առևտրի և արդիւնաբերութեան մինիստրի—իրաւունք տալ իրան, համաձայնութիւն կապելով ֆինանսների մինիստրի հետ, ժամանակաւորապէս, մէկ տարվայ ընթացքում, եթէ այդ արդիւնաբերութեան դրութեան տեսակէտից անհրաժեշտ համարելու, անմաքս արտասահմանից թոյլատրել նաւթային մնացորդները։

4) Ժողովրդական լուսաւորութեան մինիստրի—դպրոցական խորհուրդներին ենթարկելու—1875 թ. յուլիսի 1-ի հրահանգով ժողովրդական լուսաւորութեան մինիստրի բացած շինական ուսումնարանները, ինչպէս և 1828 թուի կանօնադրութեան համաձայն բացված ուսումնարանները, որոնք պահպանվում են քաղաքային և գիւղական ինքնավարութիւնների հաշւով—հանդերձ պետական գանձարանից ստացվող օժանդակութեան, և որոնք ուղղակի պահպանվում են պետութեան հաշւով։ Մինչ օրս այդ ուսումնարանները գտնվում էին ժողովրդական դպրոցների վերատեսուչների և տեսուչների հսկողութեան տակ։ Բացի վերոյիշեալներից, մինիստրների խորհուրդը քննել է մի քանի ուրիշ հերթական հարցեր։ — Պոլիւնովին բարձրագոյնս հրամայված է լինել երկրագործութեան և հողային բարեկարգութեան գլխաւոր կառավարչի օգնական։ - Դեկտեմբերի 7-ին կայացած եկեղեցական առնող ժողովի նիստում, որոշվել է եկեղեցական դատարան կազմելու հարցը՝ մասնաժողովի կարծիքով — դատարանը լինելու է. գործակալական, թեմական, սինօդի դատաւորական բաժին և ինքը Սինօդը։ Գործը կարող է անցնել երկու ինստանցիայով։ Մեղադրեալին պաշտպանելու են հոգևորականները։ Մասնաւոր անձինք չեն թոյլատրվում։ — Հրատարակված է Բարձրագոյն ուկազ՝ Մօսկվայի նահանգի արտակարգ պահպանութիւնը շարունակելու համար։ Վերջին ժամանակներս զանազան լրագիրներում յաճախ լուրեր են պատվում, թէ կառավարութիւնը մտադիր է ներքին փոխառութիւն կնքել, թէ բացարձակ և թէ ծածկամիտ կերպով—այդօրինակ լուրերը միանգամայն մտացածին են հանդիսանում։—Սօցիալ-դեմօկրատների գաղտնի կազմակերպութիւնը երևան հանելու հետ զուգընթացաբար կատարած խուզարկութիւնները իբրև հետևանք 180 հոգու ձերբակալութիւններ են տուել։—Հոկտեմբերի 17-ի դաշնակցութեան ճիւղեր են բացվել Նիկօլաևում, Արզամասում և Մօգիլէվում։—Եյցում առևտրաարդիւնաբերական կուսակցութիւնը միացել է հոկտեմբերականների հետ և ընտրել է մի բիւրօ՝ ռուս ժողովրդի դաշնակցութեան հետ համաձայնութիւն կապելու համար։

ՎԻԵՆՆԱ, 7 դեկտեմբերի։ Աւստրիայի պօստային ծառայողները — իրանց տնտեսական դրութիւնը բարւոքելուց դրդված, որոշել են պասսիվ ընդդիմադրութիւն ցոյց տալ։ Կառավարութիւնը ներկայումս նրանց հետ բանակցութիւններ է վարում։ Լուրերին նայած ընդդիմադրութիւնը կը սկսվի վաղը։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերի
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վերքաբուժութեան, վեներական (սեֆիլիս) միզաստ. հ.
Կ. Մ. ՋԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և ներվային։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. և վերքաբուժութեան։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ի. Կ. ԳԶԵԼԻՇՎԻ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.։
Գ. Ե. Գուրջինով—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութեան։
ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
Ա. Մ. ՓՈՂՆՈՎ—6—7 ժ. ներքին և երեխայոց և ծաղկահաւ.։
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ [illegible]
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Ուրբաթ, դեկտեմբերի 15-ին 1906 թւի, նշանակված է անդամների ընդհանուր ժողով ժողովարանի ամառային շինութիւնը վարձելու հարցը վճռելու և քուէարկելու այն անձանց, որոնք անդամ են առաջարկված։ Եթէ 15-ին ընդհանուր ժողովը՝ անդամների կանօնաւոր թիւը ներկայ չը լինելու պատճառով՝ չը կայանայ, այդ դէպքում ժողովը կը կայանայ դեկտեմբերի 29-ին։
(6, 10, 15) 2—3

Լոյս տեսաւ և վաճառվում է
„ՍԵՌԱԿԱՆ ԿԵԱՆՔ“
կազմ. ՆՇՏԱՐ
Բովանդակութիւն
1) Սեռական գիտելիքների անհրաժեշտութիւնը. 2) Գիտելիքներ սեռական կեանքի մասին. 3) Սեռական գործարաններ. 4) Սեռական կեանքի գործողութիւնները. ա) Երազախաբութիւն, բ) Դաշտան, գ) Սեռական յարաբերութիւն, դ) Յղիութիւն, ե) Ծննդաբերութիւն. 5) Ցաւելուած.—Երեխայի խնամատարութիւնը. գինն է 20 կոպէկ։ Գումարով գնողներին 30% զեղչ։ Երևանից դուրս 20% զեղչ. ճանապարհածախսը մեր հաշւին։ Դիմել Типографія Х. Айвазянца.
(շ.) 2—5

ԳԼԽԻ ԹԵՓԸ
ոչնչացնելու և մազերը ամրացնելու համար սապոն
№ 3374
ծախվում է ամենայն տեղ։
Բրիւսսելի 1905 թւի ամենաբարձր գինը։
Т-во Парфюм. фабрики провизора
А. М. ОСТРОУМОВА.
МОСКВА
(շաբաթօր.) 10—10

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելեամինօվսկայա փողոց № 8.
(Ե. Հ. Զ.) 2—100

Լոյս տեսաւ
„ԵՐԿՐԻ ՁԱՅՆԸ“
տարաքաբերքի տասներորդ համար
Հետևեալ բովանդակութեամբ
Ո՞ւմ համար են առեղծուել դաշնագրերը (վերջ) Տ. Զաւէն
Արևելեան հարցի կրած էվօլիւցիան Բերլինի կոնգրեսից ի վեր (1875—1906) Ռ. Պէնօն
Մի մանիֆեստ
Վոսփորի ափերէն, Մինիստրները, VIII, (Զէյնի փաշա, հանրօգուտ շինութիւններու մինիստր) Ուրկամ
Հիմական կանոնագրութիւն «Միութիւն և Յառաջադիմութիւն» օսմանեան կուսակցութեան (վերջ)
Վասպուրականցու երգը (Բանաստ.) Արսէն
Դիմում մը Պոլսի դեսպաններուն
Մամուլի շուրջը
Կարծիքներ (Թիւրքահայ հարցի մասին) VIII Տ. Քէյէկեան
Թղթակցութիւններ
1 Նամակ Կ. Պոլսից Պոլսեցի
Լուրեր

«ՄՇԱԿԻ» ներկայ համարի հետ ուղարկվում է Բագուի և Գանձակի նահանգների մեր բոլոր բաժանորդներին՝
„ԱՇԽԱՏԱՆՔ“
շաբաթաթերթի 1907 թւի բաժանորդագրութեան յայտարարութիւնը։

ԳԻՄՆԱԶԻԱՅԻ
VIII դասարանի աշակերտուհի,
որը 4 տարի
շարունակ պարապել է
աշակերտների հետ, ցանկանում է դասեր ունենալ մատչելի վարձատրութիւնով։
Հասցէն՝ «Մշակի» խմբագրատուն. (Базарная ул.) 1—5

ՀՐԱՒԷՐ
Ս. Էջմիածնի սինոդի հրամանով Ս. Սարգսի վանքը՝ ընդ անմիջական տեսչութեամբ թեմակալ տեր առաջնորդի. յանձնվում է ծխերից ընտրված և կօնսիստօրիայից հաստատված նորաբաց ուսումնարանի հոգաբարձուներին. ուստի դեկտեմբերի 10-ին կիրակի առաւօտեան 11 ժամին նոյն եկեղեցումը լինելու է ժողով՝ առաջին անգամ, ընտրելու երեցփոխան, և այս առիթով հրաւիրում եմ 22 տարին լրացած երկսեռ բոլոր ծխերին, շատակին ներկայ լինել յիշեալ եկեղեցում ընտրութեանը մասնակցելու։
Գործակալ Գրիգոր աւագ քահ. Մանդակունի
2—3

ԲԺԻՇԿ
Լեւոն Օհանջանեան
Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.։ Կանանց և երեխաների համար 11—12 ժ.։ Հասցէն անկիւն Գօլովինսկի պրօսպէկտի և Կոջորսկայա փողոցի, տուն Թումանեանի։ Մուտքը Կոջորսկի փողոցից № 2.
(տ. օ.) 291—300

ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ
Մարգար Պետրոսեանի
«Շուշան», «Լիւսի», «Հաֆիսի», «Պահակը», «Բանւորը», «Մի կտոր հացի համար», «Կապոյտ շալիկը», Արցունքներ», «Վիշտ», «Տխուր պատմութիւն»։ Բոլորը մի գրքոյկում 111 երես, գինն է 30 կ.։ Արտատպված «Մուրճ»ից, «Արշալոյսից» և «Ընկերից»։
Վաճառվում է տեղական գրավաճառների մօտ և «Փարոս» պաւիլիոնում։ Հեղինակի հասցէն՝ Бебутовская № 42. կամ Авчалы З. Ж. Д.։
(Հ. Հ.) 6—10

ԲԱՑՎԱԾ Է 1907 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ
XXV ԱՂԲԻՒՐ XXV
Մանկական պատկերազարդ ամսագրի
ԵՒ
XVIII ՏԱՐԱԶ XVIII
Պատկերազարդ ամսօրեայ ԳԵՂԱՓՆՋԻԿԻ։
ԱՂԲԻՒՐԸ առաջիկայ 1907 թ. թևակոխում է իր ՔՍԱՆՀԻՆԳԱՄԵԱԿԸ
Հրաւիրում են նրանք, որոնք գէթ մի օր աշխատակցել, աջակցել են «ԱՂԲԻՒՐԻՆ», յոբելեանական այս տարին էլ մասնակցեն, հանդիսանալով «ԱՂԲԻՒՐԻ» բարգաւաճման նախանձախնդիր։
«ԱՂԲԻՒՐ»-ով են սկսել են իրանց գրական գործունէութիւնը մեր արդի անւանի և հռչակաւոր մատենագիրներից և բանաստեղծներից շատերը, որոնց պատկերները մի յատուկ ալբոմով պիտի հրատարակւեն Հոլանդիայում, պարունակելով և այն անձինքների պատկերները, որոնք երբևիցէ աշխատակցել են «ԱՂԲԻՒՐ»-ին։
Ուստի հրաւիրում են, առանց բացառութեան, ուղարկել մեզ իրանց լուսանկարները, հասցէները, մատնացոյց լինելով թէ որ №-ում, ինչ թւի և ինչ յօդուած ունեն տպագրուած «ԱՂԲԻՒՐ»-ում։
Յոբելեանական այս 1907 թ. «ԱՂԲԻՒՐԸ» թէ իր ներքին իմաստով, ճոխ բովանդակութեամբ և թէ արտաքին չքեղութեամբ պիտի գերազանցէ նախորդ բոլոր տարիները։
«ԱՂԲԻՒՐ»-ին խոստացել են իրանց սիրալիր մասնակցութիւնը մեր գրական բոլոր ընտիր ուժերը։ Մնում է, որ «ԱՂԲԻՒՐ»-ի այսօր հասունացած հազարաւոր նախկին ընթերցողները, որոնցից շատ շատերը այսօր կազմում են առանձին-առանձին ընտանիքներ, ծնողներ են և ունեն զաւակներ, յետ նահանջեն, յիշեն իրան գարուն օրերը ու հայ բոլոր խաւերում մտցնեն «ԱՂԲԻՒՐ»-ը։
Որպէսզի իւրաքանչիւր հայ ընտանիք հնարաւորութիւն ունենայ այս յոբելեանական 1907 թ. «ԱՂԲԻՒՐ» ստանալու, մենք իջեցնում ենք «ՏԱՐԱԶԻ» բաժանորդագինը, որ պիտի հրատարակւի իբրև գեղափնջիկ ամսօրեայ՝ և 10 ր. փոխարէն «ԱՂԲԻՒՐ» և «ՏԱՐԱԶ» հանդերձ յոբելեանական պրէմիա ալբոմով նշանակում ենք ընդամենը 5 ր.
(արտասահման 10 ր.) իւրաքանչիւրն առանձին 3 ր. (արտասահման 5 ր.)
Ներկայ 1906 թ. բաժանորդներն իրանց պակաս ստացած №№-ի փոխարէն վճարում են «Աղբիւր»-ի և «Տարազ»-ի համար միմիայն 3 ր.
Հասցէն՝ Тифлисъ, Редакція «Агбюръ» կամ «Таразъ». (Tiflis, (Caucase) Redaction «Agbur» կամ «Taraz»). 1—0

ԿՈՉ

Վախճանւեց հայկական բեմի լաւագոյն ներկայացուցիչներից մէկը—դերասան ԳԷՈՐԳ ՊԵՏՐՈՍԵԱՆԸ—նա, որը իր ույժը, եռանդը և կեանքը նւիրել էր հայրենի բեմի բարգաւաճման։ Դաժան մահը, գերեզման գլորելով այդ բեղմնաւոր աշխատաւորին, որբացած, անտէր ու անօգնական թողեց այրի կնոջը և փոքրահասակ չորս երեխաներին։ Հայ հասարակութիւնը բարոյապէս պարտաւոր է հոգալ այդ մասին և նիւթապէս ապահովել այդ անբաղդացած ընտանիքի վիճակը։

Այս պատճառով հայ դրամատիկ ընկերութեան Վարչութիւնը դիմում է հայ հասարակութեան օժանդակութեանը և խնդրում, որ Պետրոսեանի յիշատակը յարգողները օր առաջ նւիրեն իրանց լուման այդ բարենպատակ գործին։

Նւիրաբերութիւնները խնդրում եմ ուղարկել այս հասցէով. Тифлисъ, Д-ру М. И. Мурадову, Ртищевская, 1.

Նւէրներ հանգանակող մասնաժողով
նախագահ՝ Ա. Մելիք-Ազարեան
անդամներ՝ Տիկ. Սիրանոյշ, Յ. Աբէլեան, իշխան Վ. Թումանեան, բժ. Մ. Մուրադեան, տիկ. Տէր-Մարգարեան, բժ. Ա. Խատիսեան, տիկ. Մ. Փիթոեւա-Բէլեցկայա, երդ. հաւատ. Ս. Յարութիւնեան։
Հայ Դրամատիկ ընկերութեան Վարչութեան
նախագահ՝ Ռ. Յովհաննիսեան։ 2—3

Ֆինանսների նախարարութեան իրաւասութեան տակ գտնվող
ՀԱՇՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ
Հեղինակ «Առևտրական, գործարանական և նաւթարդիւնաբերութեան հաշուապահութեան ձեռնարկի», որ ֆինանսների նախարարութեան ուսումնական բաժնի կողմից ընդունված է իբրև օժանդակ ձեռնարկ առևտրական դպրոցներում և նրանց գրադարաններում։
ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՆ
Երկու սեռի անձանց՝ գործնական ձևով հաշուապահութիւն 4 ամսում։
Ներկայ տարվայ կուրսերում բացի սովորական մասնագիտական առարկաներից աւանդվելու է ձրիաբար քաղաքական տնտեսութիւն (политическая экономія) և նորոյ վճարով կամաւոր արագագրութիւն (стеографія)։
Ընդունելութիւնն ամեն օր ժամը 5-ից մինչև 7-ը երեկոյեան և 9-ից մինչև 11-ը առաւօտեան։ Պարապմունքները սկսվելու են յունվարի 15-ից, 1907 թ. պարբերական ամեն 4 ամիս, ամենայն օր ճաշից յետոյ։ Տարեգիրն ուղարկվում է ձրի։
Դասընթացը աւարտողներին տրվում են ֆինանսների նախարարութեան թոյլատրված ծրագրի համաձայն, ատեստատներ։
Դրանից անկախ, բացված է քիչ պատրաստութիւն ունեցող անձերին համար առանձին լրացուցիչ և կրկնողութեան կուրսեր ռուսաց լեզուի և թուաբանութեան համար։
Ցանկացողներին խնդրում են դիմել գրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի հիմնադրին Թիֆլիսում Ч.В. Абраамяну, Николаевская ул. № 22, ամեն օր։
Վերևում յիշած ձեռնարկը ծախվում է Ռուսաստանի բոլոր գրավաճառանոցներում։
Օտարաքաղաքացիները գիրքը ձեռք բերելու համար կարող են դիմել հեղինակին առանց պոստի ծախս վճարելու. ԳԻՆՆ է 3 ր. 50 կոպէկ։ (հ. կ. ե.) 1—20

Ապպարատներ եւ պլաստինկաներ գնելիս ուշադրութիւն դարձրէք գործարանի դրօշմի վրա „Пишущій Амуръ“.
Օգտակար ընծայ առաջիկայ տօներին
ՄԵԾԱՔԱՆԱԿ ԵՒ ՀԱՏՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՊԱՀԵՍՏ

ԳՐԱՄՄՕՖՕՆՆԵՐԻ
ԵՒ
ՊԼԱՍՏԻՆԿԱՆԵՐԻ
ԱՄԲՈՂՋ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՄԱՐ
Ստացված են մեծ թւով ամենավերջին նորութիւնների պլաստինկաներ, զանազան լեզուներով։
ԳՆԵՐԸ ԱՐԺԱՆ ԵՆ
Պատկերազարդ կատալօգները և գների ցուցակները ուղարկվում և տրվում են ձրի։
„ԳՐԱՄՄՕՖՕՆ“
Ակցիօներական ընկերութեան
Թիֆլիսի բաժանմունք
Թիֆլիս, Գօլովինսկի պրօսպեկտ, տ. № 9.
Հեռագրի համար հասցէն՝ Тифлисъ "Граммокомпанія".
(Հ. Հ.) 7—25